№№ 8—9 ՕԳՈՍՏՈՍ—ՍԵՊՏԵՄԲԵՐ 1888

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№№ 8—9

Վան. «Աղբիւրի» գրականական ալբոմ։
Առ անձկալին Զուշան դուստր Վարդանայ . . . . Պ. Պռոշ։
Պերճ Պռոշեան (պատկեր)
Խալիֆ . . . . . Հասս։
*** (բանաստեղծութիւն) . . . . . Յ. Յովհաննիսեան։
Մենաքէմ Գամաղացու պատմութիւնը (շար. և վերջ) Յ. Յովհաննիսեան։
Գէորգեան Ճեմարան (պատկեր)։
Ոսկեղէն շիթեր (բանաստեղծութիւն) . . . . . † Գրիգոր Պապեան։
Մոլլա Նասրէդինի մահը . . . . . Լևոն։

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

Կողբայ սարեր, բարդող լեռան և Աղահանք . . . Սահակ աբեղայ։
Յովհաննէս Յովնանեան (պատկեր)

ԳԻՏՈՒԹԻՒՆ

Երկրիս և իր վերայ եղած արարածների մասին զրոյցներ. Ս. Ք. Բէդ-Նազարեան։

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Փոնոգրաֆ։ Ճանճերու օգուտը։ Յարալեզ։

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Մի խնդիր։ Հանելուկ։ Բերուս։ Նախընթաց №-ի մէջ եղած Հանելուկների բացատրութիւնները։

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

Պերճ Պռոշեան և իր Սօս և Վարդիթերը . . . . Դ. Աղայեանց։
№ 4-ում առաջարկութեան պատասխանը։
Մեր բաժանորդներին։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Վենետիկ Կաթողիկոս։ Գրիգոր Պապեան։ Մեր ուղևոր աշխատակից։ Արութիւն և Մանուէլի լոյս տեսնելը։ «Աղբիւրի» պրէմիան։ Բերուս։ Լևոն Սովսէսեան։ Բնաւորութիւն և բառդիրք։ Արտասահմանի ուսանողը։ «Աղբիւրի» № 10-ը, Վիճակահանութիւն։ Ստացած գրքեր։ Արտաս։ Մեր դիտաւորութիւնը։ Պատկերազարդ օրացոյց։ „Родникъ"-ի յողուածը։ Արութիւն և Մանուէլի բաժանորդագրութիւն։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

«ԱՂԲԻՒՐԻ» Գ. պրէմիան «Յաղթամարայ Ծովակը» պիտի վիճակ գցուի բաժանորդների մէջ ներկայ սեպտեմբերի 25-ին երեկոյեան 6 ժամին մեր խմբագրատանը։ Այն բաժանորդները որոնք մինչև այն օրը վճարած չեն լինիլ իրանց բաժանորդագինը նրանք վիճակահանութեան մասնակցելու իրաւունք չունին։ Վիճակահանութեան կարող են ներկայ լինել և կողմնակի անձինք։

«ԱՂԲԻՒՐԻ» ՎԱՃԱՌԱՆՈՑ

Յատկապէս երեխաների, աշակերտների և ընտանիքների համար։ «Աղբիւրի» վաճառանոցում ծախվում են մանկական գրքեր, պատկերներ, նկարներ, նօտաներ, բազմատեսակ շքեղ իրեղէններ երեխաներին և աշակերտներին ընծայելու համար. դպրոցական և դասական հարուստ և բազմատեսակ պիտոյքներ. տպվում են նոյն վաճառանոցում մօնօգրամներ (զարդարուն գլխատառեր նամակների ճակատներին). գրելու, փոստի և ՏՊԱՐԱՆԱԿԱՆ ամեն տեսակ ընտիր թղթի մեծ պաշէնս, որ կազմում է Ս. Պետերբուրգի վարդուինին եղբայրների հռչակաւոր թղթի գործարանի կովկասեան բաժանմունքը։

Վաճառանոցը ընդունում է Ռուսաստանում և արտասահմանում հրատարակուող մանկական թերթերի բաժանորդագրութիւն։

Վաճառանոցը կամենալով դիւրացնել գաւառաբնակ հեղինակների, թարգմանիչների գործը, ընդունում է Թիֆլիսում տպագրել տալու նրանց աշխատութիւնները։ Ընդունում է միջնորդ լինել և պատուիրել նրանց համար ամեն տեսակ պատկերներ, կլիշաներ։ Վարձու է տալիս «Աղբիւրի» ծաղկատառերից և նկարներից։—Վաճառանոցն ընդունում է կօմիսիայով ծախելու զանազան հրատարակութիւններ։ Վաճառանոցում զետեղուած է և «Աղբիւրի» խմբագրութեան գրասենեակը։

Վաճառանոցը յանձն է առնում գաւառական և գիւղական ուսումնարանների համար կազմել գրադարաններ, քիմիական լաբօրատօրիաներ, ֆիզիկական կաբինետներ, մանկական խաղեր և դպրոցական ու մանկական հասակի վերաբերեալ պարագաներ։

Վաճառանոցն ունի իւր սեպհական կազմարանը, պատրաստում է պատկերների համար ամեն տեսակ և գնանոց շրջանակներ։ Պատուէրները կատարվում են ճշտութեամբ և անյապաղ։

Օտար քաղաքներից դիմում են՝ Тифлисъ. Магазинъ Дѣтскаго журнала „Агбюръ“. Իսկ հեռագրով՝ Тифлисъ, „Агбюръ“.

ԲԱՑՈՒԱԾ Է ԱՌԱՋԻԿԱՅ 1889 Թ.

ԱՂԲԻՒՐ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՄՍԱԳՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՏԱՐԵԿԱՆ ԳԻՆԸ 3 Ր.

Պրեմիայի ճանապարհածախս պէտք է ուղարկել և 4 հատ 7 կոպէկանոց փոստի մարկա։

Ա. պրեմիան է՝

ԱՐՇԱԼՈՅՍ

Մի շքեղ օլէոգրաֆիա ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ ԱՒԵԼԻ ՄԵԾ *քան թէ անցեալ տարուայ* ՄՈԴԵՐԻ ԵՐԿՐՊԱԳՈՒԹԻՒՆ *պատկերը։*

Մի օրինակ դրուած է «Աղբիւրի» գրասենեակում տեսնելու համար։

Մանրամասնութիւնները միւս №-ում։

Հասցէն՝ Тифлисъ
„АГБЮРЪ“

ԱՂԲԻՒՐ

ՄԻԱՄՍԵԱՅ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԵՔԵՂԵՑԱՆԵՐՔ

ԵՒ

ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

№ 8–9

ՕԳՈՍՏՈՍ—ՍԵՊՏԵՄԲԵՐ

ԹԻՖԼԻԶ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ
ՕՐԲԵԼԵԱՆ ՓՈՂՈՑ, № 1|2
1888

Дозволено цензурою, Тифлисъ, 4 Сентябрія 1888 г.

Типографія И. Мартиросіанца, на Орб. ул., д. № 1 и 2

ԱՌ ԱՆՁԿԱԼԻՆ ՁՈՒՉԱՆ ԴՈՒՍՏՐ ՎԱՐԴԱՆԱՅ.

Ը բարեկենդան՝ ամէն մարդ ուրախ
Ուտեն ու խմեն, ասեն խաղ ու տաղ.
Խարիր ու խաղար, երգեր ասելով՝
զուռնայ դաւուլով 'ի գովունդ գան խաղ։
Ես մենակ սգով, զինչ երկինք մթնած՝
Քալեմ աստ ու անդ ամպած մրրած,
Աչքերիս ակներ մէկ մէկ լիճ շինած՝
Վարդանայ սիրուն վառիմ բորբոքուած։
Միտքս գայ էն օրն, որ լուս հաւատին
Ինքն զոհ եղաւ հետ խիստ շատերին,
զՁաւարշան դաշտն Տղմուտի գափներ
Արժանի էրաւ իւր սուրբ արիւնին։
Հայոց շատ կտրիճք էն օրն տեսան
Բացուած երկնքում զանմահ սուրբ փեսան,
Որ կանչէր իւր մօտ տալ թագ լուսեղէն՝
Որք թափեն զարիւն՝ վասն իւր սուրբ անուան։
Առի Եղիշին պատմութեան գրեր,
Բացի կարդացի զսիրտս էրող տեղեր,
Վարդանիս անդարձ ու իւր ընկերնուն
Առի ի բերան զինչ շատխօս շայլեր։
Տեսայ չըդադրեց մզկըտոց սրտիս,
Ուզեցայ ելնեմ ի դաշտ ի մէրիս,
Եւ ահա տեսնեմ իմ հին մխիթար
Ճաղատ ծեր Ղարուկն կացաւ առաջիս։
Աչեցի ի դէմքն զունափոխ էր նա,

Արցունքով լացով ինձնէ ճոխ էր նա.
Կռթընած յիւր ցուպ դողդոջուն ձեռօք
Դադրեր, չէր կարայ զոտսն փոխել նա։
Է՞ր, ասեմ, ծերունի, մատաղ եմ հոգուդ,
Է՞ր ես այլայլուած, դէմքդ ի՞ր է մութ,
Գուցէ ի Զաւարշ Տղմուտի ափներ
Վարդանայ սիրով 'ի տես գնացեր։
Կամ գուցէ Հայոց սուրբ երկիրներէն
Խապրիկ մի ունիս անտէր որբերին,
Աճապ ինչ տեսար, ինչպէս կան նոքա,
Ճառէ, մի՛ պահիր ինձ պէս շայիրէն։
Սիս Ֆառուկի սիրտն էլաւ ու էլաւ,
Նեցուկ զիւր զցուպ ու ինձի կալաւ,
Ո՛վ Հայի տղայ, ինձի նա ասաց,
զԶուշան տեսնո՞ր Մետեխին յանձաւ։
Տեսնո՞ր թէ օտրի հողի մէջ ընկած՝
Անօրէն Վազգենի խաչովն չարչրված,
Զինչ կարմիր լալգար արենաթաթախ
Եղաւ նահատակ ի ձեռքէն Վրաց։
Նա զիս առ Հայեր Մետեխի բերդէն
Բանբեր ուղարկեց արընններկ տեղէն,
Ասաւ՝ թէ գնամ առ քաղցրիկ իմ Հայր
Խնդրեմ անսասան պահել Հայ զաշխարհ։
Ասաւ՝ թող Հայերն իւրեանց Հաւատին
Հաստատուն կենան, պահեն ազգերնին,
Զինչ քաղցրիկ իմ Հայր, զինչ նորա աղջիկ
Մեռնեն երբ պէտք գայ, չանխայեն Հոգին։
—Ֆերունի, քո Հոգուն, արևուդ մատաղ,
Զուշան ի Մետեխն կայ Հիմի ի թաղ,
Զէ՞ Մցխեթին մէջ բազմած թագուհի
Ի մէջ պալատան ապրէր բազմածախ։
Զատ սէրն Վազգենի էր դարձաւ նախանձ

«ԱՂԲԻՒՐԻ» ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԱԼԲՈՄ

Վ Ա Ն.

Ճրագիկն Հայոց ի Մետեխն է մարած,
Վրացիք մթթէ Թուլցան Հաւատէն
Ինչպէս մեր Վասակ զօրէնքն փոխած։
Հայոց Հարազատ անմեղիկ Զուշան
Վրաց Հողի մէջ թաւալեց յարեան,
Ուրեմն Մետեխն մեզ այսուհետև
Ուխտատեղ դարձաւ մինչև յաւիտեան։
Կերթամ ու կերթամ լիզել զայն Հողեր,
Որ սուրբ Զուշանին է մահուան տեղեր,
Ձեռքերս բացուած գամ քեզ ով Զուշան,
Սրնիդ թափած տեղն արցունքով ցօղել։
Ասեմ ու ելնեմ զինչ խենթ ու խենէշ
Ի Մետեխն արագ վազեմ ի տնէս,
Ձիմ Հայրենակից Հայասէր զեղբայր
Առնում ու գնամ արագ արծուի պէս։
Դէպ դուռ տապանի զինչ կայծակ Հարանք,
Աւաղ սև օրնուս, շուարանք մարանք,
Գոցած փեղկերը յոյսերնիս գոցեց
Կրակ վրայ սրտից՝ վառուեցանք այրվանք։
Դարձանք աստ ու անդ զինուորաց գուման
Մարդ չէկաւ դէմ մեր, բոլորք պահապան,
Բացէք, ձեզ խուրբան, կանչեցի լալով
Ցուխտ էկանք սիրով առ մերս Զուշան։
Դռնապան չրկայ, էս մեզ պատասխան
Տուին ամէն մին ու յետ քաշուեցան,
Էլ ինչ յոյս մնաց, ասի, ով եղբայր,
Լինի յետ դառնալ չրտեսած զԶուշան։
Ասաւ՝ գնանք դուռ, ընկնենք ի գետին,
Հող լիզենք ուստից զԶուշան տարին,
Սրաերուս փափաք գէթ այսպէս առնենք,
Ե՞րբ է օգնել բաղդն մինչև օրս Հային։
Ծունկ չոքած մնացինք դուռն եկեղեցւոյն,

Աչքերս ուղղեցինք սև քարի շեմուն,
Զուշանիկ, կանչենք, Հայոց Հարազատ,
Է՞ր մեզ չխղճաս, մատաղ քո Հոգուն։
Քո թափած արնի՝ Հայազգի սիրուն
Լսէ մեր խնդիր, Զուշանիկ, սիրուն,
Տես, Հայու որդիք՝ մենք քեզ ընտանի,
Է՞ր դարձրեր զերեսդ՝ կաս դու խոր ի քուն։
Հայ են աղերսողքս, Հայուն չես լսեր,
զՀայոց օդն մի օր չես ծծեր,
Քնա՛ւ, ես ի՞նչ կրսեմ, իմ մատաղաշ Զուշան
Հայուն ի խրատ զիւր անձն է զոհեր։
Այսպէս եղբայրս ինձ, ես եղբօրս փոփոխ
Սիրտ տայինք միմեանց, լիզէինք զհող,
զՁուշան կանչէինք ու տրորվէինք,
Մինչ բարկիկ մի ձայն բերեց մեզ զդող։
Բայց փուքթով սթափանք, Զուշանայ էր ձայն,
Այն մեզ ցանկալի պարծանք Հայ անուան.
«Ո՞վ էք դուք Հայեր, Է՞ր միայն այսօր
Դաք ինձի ի տես և ոչ ուրիշ օր։
Մինչ ցարդ ականջս քաղցրիկ Հայի ձայն
Չէր լսեր երբէք, չգիտեմ կա՞յ նոր բան,
Էսօր կանխկիկ· ծեր Դառուկն եկաւ,
Բայց միայն ծնողքէս եղաւ պատմարան։
Բօլթեց, թէ նորանք Զաւարշան դաշտում
Զոհ եղան կրօնքին Հայ ազգի սիրուն,
1030 վեցն էլ նրանց Հետ՝
Արժանի եղան երկնային պատուոյն։
Բայց ասէք, Հայեր, քան դայդ չարդուշակ
Հանդէպս է դիպել, կամ նեղուած են Հայք,
Հայոց տան վիճակ ա՞յն է որ թողի
Ը՞ն դեռ վիզ ծռուկ պարսկին Հպատակ։
Կամ ըսէք տեսնեմ պատճառ ձեր գալուն

Ու աղիողորմ մղկտոց լալուն,
Ունիք պատգամ դուք իմ Հայոց տնէն,
Պատմեցէք մին մին, մեռնեմ ձեր հոգուն։
Հայք մի՛թէ իսպառ կորուսին զթագ,
Չէ՞ տուել Աստուած ձեզի մէկ նոր կեանք,
Հայոց սիրունիկ ամօթխած աղջկունք
Դեռ խլուի՞ն պարսկէն, ընկնի՞ն ոտքի տակ։
Հայոց սրբակեաց երէցք քահանայք,
Որք իւրեանց օրէնք պահէին անքակ,
Զխարազն հագած հսկէին զհօտ
Է՞ն այնպէս դեռ ժիր, տա՞ն ձեզի խրատ։
Մեր հարք հոգևորք՝ Յովսէփ, Ղևոնդ, Սահակ
Ծեր Ծառուկն կրոէր՝ առին զպրակ,
Որք ի տեղ նոցա հիմի կրգիտեն
Նրանց հաւատին, ուսման հաւատ՞ր են։
Ու թէ այլ ինչ կայ, մի՛ պահէք, ասէք,
Ձեր կորած քուրիկն մխիթարեցէք,
Հերիք չեղաւ ինձ լսած բօթերս
Զհայոց վիճակն կարդաւ ասացէք»։
—Աւա՜ղ, մի՛ կարծեր, թէ մեք բանբեր դամք,
Կամ ի Հայրենիքդ գտնուին նոր բանք,
Զի Հայոց ճակտին Աստուած գրեր է՝
Տանջիլ հեթանոս տէրանց ձեռի տակ։
Հայաստան չէ այն, ինչ որ դու թողեր,
Քո օրէն ցայսօր հազար դամ փոխուեր,
Կացին թաղուորներ, կրկին վար ընկան,
Զինչ ծակուած աման, ուր չմնան ջրեր։
Քո ազգ ընտանի, քո անբաղդ եղբարք
Քիչեր կրգտնաս Հայ երկնքի տակ.
Ըմէնք թողեր գնացեր, սաղ աշխարհ բռներ
Ստար օդ ծծեն այլ օրէնքի տակ։
Աշխարհիս ծայրէն գնա մէկէլ ծայր,

Զրկնիր երբէք տեղ, որ չրկնի անդ Հայ,
Ա՜խ, Հայի լեզուն չէ մնացեր մէջնին
Կրօնքով ճանչուին, թէ են միայն Հայ։
Ուր տիրեն թագաւորք քրիստոնեայք սուրբք
Հայերին խղճանքու կանեն մեծ գուրթ.
Իսկ ուր բարբարոսք ու խաւարասէրք
Վա՜յ Հայի օրին, պատէ նրանց մուրթ։
Հայոց սուրբ Հովիւք էլ չեն քո տեսած,
Զատեր նրանցից Հաւատէն են թուլցած,
Սուրբ ուսմունք մէջնին երբէք չրգտնես,
զՔրիստոսի սէրն իսպառ են մոռցած։
Սակայն մէջերնին լաւեր չեն պակաս,
Որք զիւրեանց օրէնք պահեն անպակաս,
Եւ սուրբ ուսմունքէն բաւական տեղեակ՝
Հսկեն զիւրեանց հօտ, որ չրկնի վնաս։
Ի լուսաւորչերկիրս Հայք են լուսաւոր
Ուսմունք գիտութիւնք ունին կարևոր,
Հայոց հրագն ահա մերձ է՞ ի վառիլ
Հայն հիմի գտեր, քալէ ճամբաս նոր։
Ահա քեզ, քուրիկ, Հայոց Զուշանիկ,
Հայոց անց ու դարձ էրի քեզ՞ կարճիկ,
Իսկ թէ էր այսօր միայն գամք առ քեզ.
Ծառուկէն իմցանք, թէ ես յայս տեղիկ։
Զուշանիկ երբ որ զիմ խաբրիկ լսեց
Վասն նեղութեանց, ցաւեց, աւաղեց,
Բայց վերջին բանիւ քիչ մ'սիրտ առաւ
Ու մեզ տապանէն՞ այս պատուէր տուեց։
—Իմ քաղցր եղբարք, թէ զիս կու սիրէք,
Հեռու Հայերուն իմ բան պատմեցէք,
Թող զարթնին քնէն, ուսմանց Հետևեն
Լեզուն ու կրօնք սուրբ սիրով պահեն։
Ծառուկն ղրկեցի իմ եղբարց իմ մօր

Ու Հայ աղջկանց տալ վերջին բարով,
Իսկ զձեզ ղրկեմ օտար երկիրները՝
Իմ բաներս ասել ողջ Հայոց կարգով։
Ես մօտիկ Հայոց կ'աչքեմ բոլորից
զԱստուած կաղերսեմ պահել փորձանքից,
Յայս ծայր քարափիս, յայս օտար տեղում
Թևիս տակ կ'առնեմ, կազատեմ չարից։
—Մնա՛ս դու բարով, քաղցրիկ մեր Զուշա՛ն,
Այս օտար երկրում պարծանք Հայ անուան,
Մենք երկու եղբարք կերթանք Հեռու տեղ,
Հայոց կըպատմենք ինչ որ է քո բան։
Կէցցէ՛, Հա՛, կեցցէ՛, կեցցէ՛ յաւիտեան,
Զուշանիկն ի Մետեխն կեցցէ՛ մեզ պաշտպան,
Իսկ մեք բոլոր Հայք սիրով միաբան
Հաստատուն պահենք Զուշանի Հրաման։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊՈՒՕՇ ԱՇՏԱՐԱԿԵՑԻ

ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

1859 Թ. 18 Ապրէլ № 16.



ՊԵՐԱ ՊՈՕՉԵԱՆ

30 ամեայ գրական գործունէութեան առթիւ

ԽԱԼԻՖ

(Փլորիանից)

Յաղդատ քաղաքում Ալմամոն անունով մի Խալիֆ կար. նա այնպիսի՛ մի գեղեցիկ և հոյակապ պալատ շինել տուեց՝ որ Սողոմոնն անդամ մտքովը չէր անցրել շինելու։ Հարիւրաւոր մարմարիւններով զարդարուած էր շինութեան ճակատը. գաւիթը զարդարուած էր ոսկով, արծաթով և այլ պատուական քարերով։ Հազար տեսակ քանդակներով զարդարուած բնակարաններում եղևնեայ փայտից շինուած յարկերի տակ տեսնվում էին հարստութեան և բնութեան գանձերը. տեսնվում էին ծաղիկներ, ակներ, բուսեղէններ խնկեղէններ և մշտադալար մրտենիներ։ Վերջապէս, այնտեղ կարելի էր տեսնել շատ հրաշալի բաներ։ Այնտեղ կարելի էր տեսնել շատրուաններ և մեղմ ալիքներով ծփացող աւազաններ՝ բեհեղեայ անկողնի մօտ։

Այս շքեղ պալատի դէմուդէմը մի շատ նեղ տուն և նրան կից կտաւ գործողի մի գործարան կար։ Այս գործարանի և հին ու խարխուլ տան տէրն էր մի աղքատ և ծեր մարդ, որ իւր դառն աշխատանքի չնչին վաստակով առանց պարտքի ապրում էր ուրախ, անդորր, հանգիստ և ազատ։

Նա ոչ ոքի չէր նախանձում. ոչ ոք էլ նրան չէր նախանձում։

Սոսցի որ նրա տնակը պալատի դէմուդէմն էր և պալատի շքեղազարդ մուտքը նսեմացնում էր։

Խալիֆի վեզիրը առանց այս ու այն կողմը մտիկ տալու, առանց կարգի ու օրէնքի, կամեցաւ աղքատի անշուք տունը քանդել և սրբել. բայց Խալիֆը առանց օրէնքի թոյլ չտուեց բռնի բան անել. հրամայեց որ տնակը փողով գնուի։

Վեզիրը Խալիֆի հրամանին լսեց. առաւ ոսկի որքան հարկաւոր էր, գնաց ծերունի կտաւ գործողի մօտ, փողը ձեռքին։ Գործաւորը հանդարտ և անվրդով ասաց. «Քո փողը քեզ, իմ գործարանը քանի ձեռքիս է՝ ես ոչ մի բանի պէտք չունիմ. իսկ իմ տունը ես չեմ քանդիլ, որովհետև այստեղ է հայրս մեռել, այստեղ է մայրս ինձ ծնել, ես էլ այստեղ եմ կամենում մեռնել»։

«Խալիֆը կարող է ինձ դուրս անել, կարող է տունս էլ քանդել, կ'անի. իսկ ես ամեն առաւօտ կրգամ, քանի որ կենդանի եմ, և կրողբամ իմ տան վերջին քարի վերայ։ «Գետեմ Ալմամոնի սիրտը, կը խղճահարուի նա»։

Աղքատի այս համարձակ խօսքի վերայ վեզիրը սաստիկ բարկացաւ. և նոյն ժամին սպառնում էր թէ տունը քանդել և թէ ծերունուն, որ յանդգնաբար խօսել էր, չարաչար և անխնայ պատժել։ Բայց Խալիֆն արգելեց ու ասաց.

«Կամենում եմ որ այս տնակը իմ փողովը հիմքից շինուի. իմ փառքիս համար այս տունը միշտ պիտի մընայ. կամենում եմ որ մեր թոռները այս տունը տեսնելով, այս անցքը միշտ միտ-բերեն, և իմ օգոստափառ իշխանութեան անջինջ արձանը այս համարեն. տեսնելով այս ճոխ պալատը՝ ՆԱ ՄԵԾ ՄԱՐԴ ԷՐ կասեն.

Տեսնելով այս խրճիթը՝ ՆԱ ԱՐԴԱՐԱԴԱՏ ԷՐ կասեն։

ՀԱՍՕ.

---

*
* *

Ձեմում էի բուրաստանում,
Առաւօտ էր մայիսեան,—
Խնդում էի, զուարճանում,
Ուրախակից բնութեան։

Անհոգ խաղով ես մօտեցայ
Քնքուշ բացուած ալ վարդին.
Անուշ հոտից չկշտացայ,
Զմայլեցայ ալ վարդին։

Առայ՝ մէկ մէկ ես բաց արի
Թերթիկները նայելու,
Բայց, ա՜խ, ինչո՞ւ նորա սրտի
Վերքին պէտք կար դիպչելու...

Նորա մատաղ կուրծքի միջին
Զաղիր որդն էր բուն դրել.—
Վա՜յ նազելի իմ ալ վարդին,
Կեանքի թելն էր կտրուել։

Ց. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ։

Թիֆլիզ 88 թ. Յունիս.

ՄԵՆԱՔԷՄ ԳԱՄԱՂԱՅՈՒ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

(Վ. Կորոլէնկոյից)

Ուրբի Մենաքէմը ասաց իւր աշակերտներին և իւր մօտն եկած յեսուէաց հետևեալ առակը.

Մի անգամ Աստուած խղճաց չարութեամբ և թշուառութիւններով լցուած երկրին։ Եւ ասաց. կ'ուղարկեմ մարդկանց իմ սիրած հրեշտակին, որին երկիրը դեռ չէ տեսել . . . Եւ նա կանչեց իւր մօտ անմեղ հրեշտակին, որի անունն է «Անդիտութիւն չարի»։

Երկնաբնակ սերովբէի աչքերի մէջ մի այնպիսի խորին պայծառութիւն կար, այնպիսի խաղաղական ուրախութիւն և անմեղութեան հեզութիւն, որ ամէն անգամ, երբ Աստուծոյ հայեացքը մեղաւոր երկրի վրայ շատ նայելուց տխրութեան մռայլ քօղովն էր ծածկվում, նա նայում էր իւր սիրելի երեսին, նրա կապոյտ փայլուն աչքերին, և ինքն էլ պայծառանում էր . . . Հրեշտակը եկաւ կանգնեց Աստուծոյ առաջ ճիւնավայլ հանդերձով և նրա վրայ ձգեց աչքը, ուր մանուկ անդիտութիւն էր ցոլանում...

Եւ ասաց Աստուած իւր հրեշտակին. թռիր դնա՛ ահա այնտեղ, երկիրը, թող մարդիկ տեսնեն քո պայծառութիւնը և ամաչեն իրանց խայտառակ գործերից։ Ամաչեն և հեռու մնան։ Քո անդիտութիւնն այնպէս հզօր է, որ նոքա մեղք գործելը կը մոռանան։

Հրեշտակը ժպտաց և կամաց սլացաւ դէպի երկիրը։

Եւ շատերը նորան տեսան, և ով որ նայում էր նրա յստակ աչքերին, պայծառանում էր . . . Եւ անբաղդը մոռանում էր իւր վիշտը, իսկ չարը մոռանում էր իւր չարութիւնը, և Հրեշտակի եղած տեղումը սասանում էր չարութիւնը, իսկ նա թռչում էր հեռու և հեռու, և առաջուան պէս նրա աչքերը յստակ էին, որովհետև չարը նա չգիտէր: Մի անգամ թռչում էր նա երկրի վրայ և անտառումը մի մարդ տեսաւ: Մարդը գնում էր մի շաւղով և ականջ էր դնում անտառի շրշիւնին և իւր չորս կողմն էր նայում, որովհետև նրան հալածում էին մարդիկ:

Բայց Հրեշտակը չգիտէր թէ ինչու համար են հալածում այն մարդուն անտառումը և կամենում էր իջնել և կանգնել անբաղդի առաջին իւր յստակութեան փայլովն ու անմեղութեան հեզութեամբը

Բայց այդ միջոցին այն մարդը մօտեցաւ մի ուրիշ մարդու ընակարանի, որ նստած էր շեմքումը և թուլացած տան առաջին փոխոստականն ասաց.

—Ես էլ դնալ չեմ կարող, ես յոգնած եմ, ինձ հալածում են և կ'սպանեն: Պատսպարան տուր ինձ և պաշտպանիր ինձ քո տանը:

Եւ մարդը պատասխանեց. ես գիտեմ ով է քեզ հալածում. նոցա հայրերը և պապերը միշտ հալածել են անմեղներին, իսկ իմ հայրերը և պապերը պատսպարել են թոյլերին և ճնշուածներին . . . Եւ ես քեզ կը պաշտպանեմ: Մտիր իմ տունը և քնիր . . . Բայց առաջ թող քո շղթաները փշրեմ, ինչպէս իմ հայրերն ու պապերն են արել և կտակել ինձ:

Եւ նա ջարդեց շղթաները, ուժեղ ձեռով ձգեց հեռու և ասաց.

Թող իմ հայրերի և իմ որդոց տունը չպղծուի ստրկութեան շղթաներով:

Եւ հալածուած մարդը տուն մտաւ և քնեց, իսկ

Հրեշտակը բոլորը լսեց և տեսաւ և ոչինչ չհասկացաւ, որովհետև Անգիտութիւն էր նրա անունը։

Նա խոնարհեցաւ վաստակեալի վրայ և ժպիտ երևեցաւ քնողի շրթունքի վրայ և պայծառացաւ նրա հոգին և քունը խորացաւ։

Եւ յետոյ հրեշտակը մօտեցաւ տանտիրոջը որ նստած էր շեմքի վրայ, բայց տանտէրը չտեսաւ Անգիտութեան հրեշտակին, որովհետև նայում էր դէպի անտառի խորքը։ Նա պահպանում էր իւր քնած հիւրին։

Այն ժամանակ հրեշտակը թռաւ, անց կացաւ։

Եւ շուտով նա յոգնած, չարչարուած մի կատաղած մարդկանց հանդիպեց։ Քրտինքն ու չարութիւնը փակել էին նրանց աչքերը և նրանք չէին տեսնում որ իրանց առաջին կանգնածը հրեշտակ է, այլ միայն հարցնում էին թէ նա շղթայակապ մարդ չէ՞ տեսել արդեօք։

Եւ հրեշտակը խղճաց յոգնած մարդկանցը և ձեռը մեկնելով դէպի այն տունը, որտեղ շղթայակապ մարդուն տեսել էր, ասաց. եկէք իմ յետևիցը,—նա այնտեղ է։

Եւ ինքը առաջ ընկաւ գնաց և բերեց նոցա տան մօտը. փախստականը քնած էր ժպիտն երեսին, որովհետև նորա հոգին պայծառ էր։

Եւ երբոր տանտէրը մարդկանց ոտների ձայնը լսեց և տեսաւ եկողներին, շուտով տեղից վեր կացաւ մտաւ տուն։

Եւ զարթեցնելով քնածին, ասաց. եղբայր, դու հանգըստացար։ Գնա՛ իմ տանիցը և շտապի՛ր որ շատ հեռանաս, որովհետև հալածողները մօտենում են...

Մարդը վախեցաւ և ասաց.

—Նոքա ինձ կ'սպանեն անտառումը։ Ես քնած էի քո տանը, ժամանակ չեմ ունենալ ազատուելու...

Վա՜յ ինձ, ես կորած եմ...

Բայց տանտէրը պատասխանեց.

—Հեռացիր շուտով, իսկ ես նրանց այստեղ կը բռնեմ։

Հայրերս ու պապերս աւանդել են ինձ Հիւրի քունը պահպանել, և դեռ ոչ ոք չէ վնասուել իմ տանը քնելուց։

Փախստականը հաւատաց և փախաւ անտառը, իսկ տանտէրը զէնքը ձեռն առաւ և կանգնեց շէմքի վրայ։

Եւ հալածող մարդիկը մօտեցան տանտիրոջը և ասացին։

—Քո տանը մի մարդ կայ որին մենք պիտի սպաննենք։ Դուրս բեր նրան և տուր մեզ։

Բայց տանտէրը պատասխանեց.

—Ձեր հայրերն ու պապերը միշտ հալածել են անմեղներին, իսկ իմ հայրերն աւանդել են ինձ պահպանել Հիւրի քունը։

Այն ժամանակ մարդիկ մերկացրին սուրերները, իսկ հրեշտակը կանգնած էր և չէր հասկանում ոչինչ, որովհետև Անգիտութիւն էր նրա անունը։

Եւ պողպատն առաւ պողպատին ու բարձր զընգզընգում էր, խնդրելով ուրիշի կեանքը պաշտպանող մարդու մահը... Իսկ հրեշտակը լսում էր, բայց ոչինչ չէր հասկանում... Եւ երկար ժամանակ պողպատը շողշողում էր ու զընգզընգում, մինչև որ օձի պէս ֆշշալով մտաւ պաշտպանի կուրծքը։ Եւ նա արիւնաշաղախ վայր ընկաւ իւր տան շէմքի վրայ...

Եւ արիւնը ժայթքեց վէրքից և թռաւ հրեշտակի ձիւնափայլ հանդերձի վրայ, և արեան կարմիր բիծը մընաց նրա վրայ։ Եւ հրեշտակի ականջին հասաւ այն մարդու մահուան հառաչանքը, որի կոլսաեան պատճառը նա եղաւ իւր անգիտութեամբը... Իսկ հալածողները տուն յարձակուեցան և ոչ ոքի չգտան։ Եւ դուրս գալով այնտեղից նոքա ասացին տանտիրոջը.

—Ահա դու սուտ ասացիր, ճշմարտութիւնը մեզանից ծածկեցիր և ինքդ մեռնում ես։

Իսկ տանտէրը պատասխանեց։

—Ես ճշմարտութիւնը ծածկեցի ձեզանից, բայց իմ ճշմարտութիւնը բաց է Աստուծոյ առաջ, որովհետև ես մեռնում եմ թոյլին պաշտպանելով, ինչպէս որ արել են իմ հայրերն ու պապերը։ Եւ իմ արիւնը ես կտակում եմ իմ որդոցը և ձեր որդոցը։

Այս ասելով նա մեռաւ, և Հրեշտակը որ բոլոր խօսքերը լսեց, չհասկացաւ նոցա միտքը, որովհետև նրա անունն էր Անգիտութիւն...

Բայց երբ Հրեշտակի աչքն ընկաւ կարմիր բծի վրայ, նրա ցոլքը մնաց Հրեշտակի աչքերի մէջ և նոքա կորցրին նրանց նախկին պայծառութիւնը... Գանգատի ու երկիւղի զգացմունքով նա աչքը դարձրեց մարդկանց վրայ և յետոյ մահուան սարսափով բարձրացաւ դէպի Աստուծոյ աթոռը և կանգնեց նրա առաջ։ Եւ Աստուած նայեց նրա աչքերին ու հանդերձին...

Հրեշտակը կանգնած էր նրա առաջ, և նրա աչքերի մէջ պայծառութիւն չկար, այլ տագնապ և ցաւ և ամօթ, որովհետև նա արեան մէջ էր թաթախուած։ Եւ Հրեշտակի աչքերը պղտոր էին, որովհետև նրանց մէջ այլ ևս չկար առաջուան մաքուր անդիտութիւնը, բայց և չկար սգաւոր գիտութիւնը։

Եւ Աստուած տրտմեց, իսկ Հրեշտակն ասաց յանդիմանութեամբ։

—Տէր, Տէր... ահա՛ Դու որ ուղարկեցիր քո Հրեշտակին... ահա՛ ինչ արին ինձ մարդիկ... Հիմայ քար կայ սրտիս վրայ...

Եւ Աստուած նայեց Հրեշտակին ու լաց եղաւ.

—Ո՛վ մարդիկ, մարդիկ, ի՞նչ արիք դուք իմ սիրելիին։

Այդ ի՞նչպէս եղաւ և որտեղ կորցրիր դու քո պայծառութիւնը։

Այն ժամանակ Հրեշտակը պատմեց Տիրոջը իւր գըլխովն անցած բոլոր բաները.

Անտառումը ես մի շղթայակապ մարդ տեսայ, մի ուրիշ մարդ էլ նստած էր խրճիթի շեմքի վրայ, և նոքա մի բան էին խօսում Հալածանքների ու պաշտպանութեան մասին, բայց ես բան չհասկացայ: Յետոյ յոգնած մարդը մտաւ խրճիթը, իսկ ես թռայ տնց կացայ... Ես կամենում էի երևիլ նրանց, բայց նրանք ինձ չտեսան, որովհետև ուրիշ բանով էին զբաղուած...

—Նրանց քո երևիլը հարկաւոր չէր,—Ասաց Աստուած:

Առաջ դու պիտի երևէիր Հալածողներին և յետոյ Հալածեալներին:

Ես չգիտէի, պատասխանեց Հրեշտակը:—Եւ հեռու այնտեղից ես տեսայ ուրիշ մարդիկ, որոնց աչքերը վառկել էր քրտինքն ու թշնամութիւնը: Նրանք առանց վերաս նայելու հարցրին թէ ո՞ւր է շղթայակապ մարդը: Ես ցոյց տուի նրանց խրճիթը...

Աստուած խոնարհեցրեց գլուխը և ասաց.

—Աւա՜ղ, աւա՜ղ... Ես տեսնում եմ այժմ որ երկիրը հեղահամբոյր Անդիտութեան տեղ չէ...

Իսկ Հրեշտակը պատմեց բոլորը և բացագանչեց.

—Դու ինքդ ուղարկեցիր ինձ երկիրը, այս պատահածի մեղաւորը Դու ես և ոչ ես... Աղատիր ինձ այս սիրտս ճնշող ծանրութիւնից, ջնջիր հանդերձիս վրայից այս գարշելի կարմիր բծերը... Այնպէս արա՜, Անսկիզբն Հա՛յր, որ ես անդէտ լինեմ առաջուան պէս, որ հոգուս մէջ դարձեալ թագաւոր է սուրբ անդիտութեան պայծառութիւնը...

Եւ Հրեշտակը հեծելով խոնարհեցաւ Աստուծոյ աթոռի առաջ:

Բայց Աստուած պատասխանեց.

Ինքդ չգիտես ինչ ես խնդրում։ Ես այդ չեմ անիլ, այլ ուրիշ բան կ'անեմ. Անգիտութեան տեղ կը տամ քեզ Վշտալի գիտութիւն։

Եւ Աստուած պատմեց Հրեշտակին թէ ինչ արիւն է կաթել նրա Հանդերձի վրայ և ասաց նրան.

—Աւանդում եմ քեզ որ այդ արիւնը պահես իբրև սրբութիւն։ Այդ սուրբ արիւն է, խեղճի պաշտպանութեան համար է թափուած։ Եւ այս իմանալով, դու կ'ողբաս, իսկ քո անգիտութիւնը այլ ևս չի դառնալ...

Ես իսկ չեմ կարող ջնջել ժամանակի տախտակների վրայից այն, ինչ որ եղել է մի անգամ։ Եւ մի՞թէ դու կամենում ես որ բոլոր եղած բաները մնան անցեալումը, իսկ քո սրտումը թագաւորէ պայծառ բերկրութիւն...Ա՞յս ես կամենում, այս ես խնդրում արդեօք...

Եւ մինչ Աստուած խօսում էր, Հրեշտակի աչքերից հեռացաւ տաղնապալոյզ ցաւը և ցոլացաւ վշտալի գիտութիւնը, և նա սարսափեցաւ և ընկաւ Աստուծոյ աթոռի առաջ և բացագանչեց.

—Ո՛չ, Ամենազօր Տէր... Չեմ կամենում, չեմ կամենում... Թող միշտ ինձ հետ լինի իմ վիշտը։

Եւ Աստուած բարձրացրեց Հրեշտակին և ասաց.

—Դու առաջուան պէս իմ սիրելին կը լինես, և իմ սէրը աւելի ևս կը լինի դէպի քեզ... Բայց այսուհետև քո անունը Անգիտութիւն չէ...Քո անունն է Մեծ Վիշտ...

Եւ Հրեշտակը կանգնեց և աչքը բարձրացրեց Աստուծոյ վրայ. և Աստուած կրկին սիրով նայում էր նորա աչքերի մէջ և տեսնում էր այնտեղ... վիշտ։

Եւ Հրեշտակն ասաց. այժմ, Տէր, թող դարձեալ գնամ երկիրը... Ես արդարի սուրբ արիւնը կը տանեմ նրա որդոց համար... Եւ թող, երբ որ նրանք մեծանան, պայծառութեան փոխարէն գիտութեան վիշտը լինի նրանց աչքերի մէջ...

Եւ այն ժամանակ արդարի որդիքը պատրաստ կը լինին պաշտպանել խեղճերին իրանց պապերի նման և կը կատարեն հայրերի կտակը, մինչև որ Հալածողների որդիքը հասկանան այն վիշտը, որ ծագում է բռնաւորների կտակիցը . . .

Եւ խոնարհելով Աստուծոյ առաջ, հրեշտակը բարձրացաւ և թևերը կամաց շարժելով սլացաւ դէպի երկիրը, իսկ Աստուած սիրով նայում էր Վշտի յետևիցը . . .

Մինչ Դամասդացին ասում էր առակը, երեկոյեան կապոյտ քողը փռուեցաւ երկրի վրայ:

Եւ երկիրը ընկղմեցաւ մշուշի մէջ, իսկ երկնքում վառուեցան Աստուծոյ ճրագները, դարձեալ բոցեղէն սուրը ցոլացաւ, Հրէաստանի կողմը դարձած:

Եւ բոլորի սիրտը խոնարհեցաւ և խաղաղացաւ բոլորի հոգին լցուեցաւ ակնածութեամբ և երկիւղածութեամբ Աստուծոյ կամքի յայտնութեան նշանի առաջ: Եւ բոլորը լուռ էին, ականջ էին դնում գիշերային խաղաղութեանը:

Մարդկանց թուում էր թէ լսում են աստղի ահեղ ընթացքը անվախճան տարածութեան մէջ,—այն աստղի որ անխուսափելի պատահարներ է գուշակում:

Իսկ Դամաղացին կանգնեց իւր տան սանդուղքի վրայ, ձեռները մեկնեց դէպի կապոյտ երկինքը և լուսաւորուած երկնային ճրագների լուսովը աղօթում էր Ադոնայի Տիրոջը.

—Ո՛վ Տէր, Տէր,...

Դու երկրին նշաններ ես ուղարկում, բայց չես մեկնում նրանց խորհուրդը: Այս երկրումը, որի կողմն է ուղղած քո բարկութեան սուսերի ծայրը, կան այժմ Հալածողներ և Հալածեալներ... Նրանցից որո՞նց է սպառնում Քո նշանը... Թող լինի Քո կամքը, Ամենաբարձրեալ Տէր, բայց դէպի Քեզ է իմ ջերմագին աղօթքը: Ընդունիր Դու նրան, բարձանց վրայ բազմեալդ և իմաստուն աչքով ան-

վախճան ժամանակների տեսնողդ։ Քո մէջ է յոյսերի կատարումը, Քո մէջ է անդիտելեաց մեկնումը, Քո մէջ է Հաշտութիւնը . . .

Եւ եթէ Դու անվախճան իմաստութեամբդ մեր ժամանակումը կորուստ ես վճռել արդար գործին և կրկին անգամ յաղթութիւն պիտի տաս բնութեանը,—

Եւ եթէ մենք պաշտպաններս կորուստի ենք դատապարտուած, իսկ հալածողները յաղթութեան և ամպարշտութեան սեղաններ պիտի կանգնեն Քո սեղանների տեղ,—թող լինի . . .

Բայց կատարեր դատապարտեալների ինդիրքը, կատարեր մեր ինդիրքը, Բարձրեալ Տէր։

Թող երբէք չմոռանանք մենք, քանի կենդանի ենք, ճշմարտութեան Համար մարտնչելու աւանդը։

Թող երբէք չասենք. աւելի լաւ է մենք փրկուենք, առանց պաշտպանութեան թողնելով խեղճերին։

Թող մեր ոչ մի Հարուածը ուղղուած չլինի նրա դէմ որ անհաղորդ է բռնութեան։

Թող երբէք ձեռնամուխ չլինինք օտար սեղանների սրբութեանը, մեր սեղանների պղծութիւնը չմոռանալով։

Թող մեր միտքը յստակ լինի որ մեր ոտները ճշմարտութեան ճանապարհը գնան, իսկ մեր բազուկների հարուածները պաշտպանութեան Համար և ոչ նեղելու։

Եւ երբ մեր աչքերը փակուելու լինին մահուան առաջ, մեզ թող մեր Հաւատը, Տէր Աղովնայի, արդար գործի յաղթութեան Հաւատը երկրի վրայ։

Որ մենք իմանանք թէ ճշմարտութեան օրէնքը. անսխալական է, որպէս բնութեան օրէնքը. ահա այժմ ահեղ նրան բոցավառվում է կապոյտ երկնքումը, բայց նա կ՝անցնէ և կը չքանայ։ Իսկ ձեզ լուսինը որ այժմ Հազիւ նշմարելի է, դարէդար կը ծագէ իւր ժամանակին երկրի վրայ։

Իսկ երբ Քո կամքի ժամը գայ և մենք կորչենք, թող Վշտի հրեշտակը իւր թևը հովանի անէ մեր գերեզմանների վրայ և պատմէ մեր մասին մեր որդոցը և մեր թշնամիների որդոցը, որ և մեր մահը արդար գործի ծառայէ:

Եւ ես հաւատում եմ, Տէր, որ երկրի վրայ կը գայ Քո արքայութիւնը . . .

Կը չքանայ բռնութիւնը, ազգերը կը միանան եղբայրութիւնը տօնելու համար և երբէք այլ ևս մարդու արիւն չի թափուիլ մարդու ձեռից:

Այն ժամանակ Վշտի հրեշտակը բերկրութեամբ շարժելով թևերը երկինք կը բարձրանայ, իսկ երկրի վրայ բերկրութիւն և խաղաղութիւն կը լինի:

Թող այն ժամանակ մարդիկ չիշեն մեզ՝ անբաղդներիս, որ անդթութեան օրերում թափեցինք մեր արիւնը պաշտպանութեան գործի համար և ոչ նեղելու: Ամէն . . .

Ց. ՑՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ



ԳԷՈՐԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆ

15-ԴՂ. տարեղարձի առ. ԼԵԹՈՎ։

«ՈՍԿԵՂԷՆ ՁԻԹԵՐ

—

Ձանթթափ արեգը խեցգետին մտած,
Յունիսից արդէն քարեր է կիզում.
Եւ հարաւ-քամիք խսլառ ընդհատած,
Բոցի սահանքից կրակ են վիժում...
Զորցած, աղանձուած կաւային երկրի
Խորին ճեղքերից բղխում է դարշ հոտ.
Եւ յորձանքներից փոշեայ մրրկի
Լռուել, խեղդուել է ամբողջ մթնոլորտ:
Զոր, դաշտ ու անտառ չեն շնչում կրկին,
Ցամքել են գետեր, չորցել արմտիք.
Հողը որպէս քար մերժում է բահին,
Սարսափից, տօթից ողբում են մարդիկ...
Թնդում է խեղդիչ օդը՝ հօտերի
Աղեկէզ ձայնից. և թռչուն, միջատ
Փորձում են իւրեանց դադրած թեւերի
Սոսինով լինել տապից ազատ...
Այս ողբերգական վայրում անընդհատ
Ղողանջ է հանում անլեղու տարրը,
Եւ խուռն խմբեր մարդկան յուսահատ
Ողբով են լցնում Վեհի տաճարը:
Բայց միշտ անողոք մնում է երկինք.
Ձկայ ամպի հետք և ոչ լոկ նշան.
Մահը սովի հետ կապում է դաշինք,
Ժանտախտ ծնելու հաստատում պայման...
Դարձեալ ամբոխը եռանդուն հոգով
Մաշում է շէմը հին սրբարանի.
Դարձեալ պատարագ անոյշ բուրմունքով
Ծխում է բեմից վեհ խնկարանի:
Վերջապէս ահա Մասիսի գլխին
Նսեմ փայլում են ամպերի շերտեր.
Հրճուանք անպատում տիրեց ամբոխին,
Երբ ցած թափուեցան «Ոսկեղէն Ձիթեր»...

† ԳՐԻԳՈՐ ՊԱՊԵԱՆ.

ՄՕԼԼԱ-ՆԱՍՐԵԴԻՆԻ ՄԱՀԸ

Մօլլա-Նասրեդինը մէկ օր գնում է անտառ փայտի։ Բարձրանում է մի մեծ ծառի վրայ և սկսում է կտրել հէնց այն ճիւղը, որի վրայ ինքն է լինում կանգնած։

Անցորդի միտն այդ բանը տեսնելով՝ վախեցած ձայն է տալիս.

—Մօլլա, մօլլա, այդ ինչ ես անում։

—Հը՛, ինչ է։

—Էլ ինչ պէտք է, ինչ ճղան վրայ որ դրել ես ոտդ, դու հէնց այն ճիւղն ես կտրում։

—Է՞, ինչ վնաս դրանից։

—Եէ որ վայր կընկնես։

—Մի՛ վախենար, չեմ ընկնիլ։

—Հաւատա՛, վայր կընկնես։

—Ես էլ ասում եմ՝ չէ. դու աւելի լաւ կանես, եթէ քո ճանապարհը շարունակես։

Անցորդը հեռանում է գլուխը շարժելով. իսկ մօլլան շարունակում է իւր գործը և մի-երկու հետ էլ կացնում է թէ չէ, ճիւղը կոտրվում վայր է ընկնում, մօլլին էլ հետը տանելով։ Մօլլան գետնին զբրխկալուն պէս զարմացած բացականչում է. «Վա՛յ, այն մարդն ինչ իմաստուն

մարդ է եղել», ու վեր է թռչում վազելվազ գնում անցորդին հասնում և օձիքից ամուր բռնում։

Հիմա էլ անցորդը.

—Հը՛, ի՞նչ է։

—Ես ե՞րբ պէտք է մեռնեմ։

—Տէր ողորմեա՛, ես ի՞նչ գիտեմ։

—Հապա ի՞նչպէս իմացար, որ ես պիտի վայր ընկնէի։

—Այդ յիմարն էլ կիմանար. . . դէ թո՛ղ տուր օձիքս։

—Չեմ թողնիլ, մինչև չասես։

Անցորդը լաւ հասկանալով որ դրա ձեռքից պրծնելիք չի լինելու՝ մինչև մէկ բան չասէ, մի անմեղ սուտ է հնարում։

—Ը՛տ դառ, ասում է, գնա քո կտրած ճիւղը փէտ արա, բարձիր իշիդ ու քա՛նի կարող ես շուտ-շուտ քշիր. եթէ էշդ մինչի այս սարի գլուխը՝ առանց կանգ առնելու, մէկ շնչումը հասնի հո՛, լա՛ւ, եթէ ոչ անպատճառ կրմեռնես։

Մօլլան անցորդի պատուէրն ամենայն ճշդութիւնով կատարում է։ Էշը բաւականին արագ-արագ սկսում է բարձրանալ, մօլլան էլ ետնից. սակայն նախկին յոգնածութիւնից ու այժմ էլ սարն ու դուս արագ-արագ բարձրանալուց համարեա շունչը կտրվում, մեռնողի վերջին դրութեան է հասնում. իսկ միքիչ յետոյ որ էշն էլ յոգնելով՝ կանգ է առնում. «Վա՛յ, վա՛յ», բացականչում է մօլլան յուսահատ, «հոգիս դուրս եկաւ—մեռայ», ասում է ու երկար ու մէկ ձգվում։

Մուրթը որ պատում է, գայլերը վրայ են թափվում և սկսում մաքրազարդել էշին։ Մօլլան այդ բանը տեսնելով՝ յոգոց է հանում ու ասում. «Հէ՛յ գիդի հա՛. զերեզմանդ պատուրի, Մօլլա-Նասրէդին, դու կենդան լինիս և քո աչքիդ առաջ էշդ գայլերն ու�՝, վա՛խ-վա՛խ». . .։ Մի քիչ յետոյ մտածում է ինքն իրան. «Ո՞վ ի՞նչ կիմա-

նայ՝ իմ ուր կամ ինչ դրութեան մէջ լինելս. լաւն այն է ես ինքս գնամ մեր տուն, իմ կնկան իմացում տամ այս մասին». . . : Վեր է կենում գնում. դեռ տուն չհասած՝ բաւականին հեռուից ձայն է տալիս.

—Հէէէ. . . Մօլլա-Նասրէդինի կնիկ, Մօլլա-Նասրէդինի կնիիիկ. . . :

Կինը դուրս գալով՝

—Հէէէյ. ինչ ես ուզում, ով ես:

—Իմ ով լինելս քեզ պէտք չէ. մարդդ այս ինչ տեղ մեռել է, առաւօտուն գնացէք բերէք և իրեն Ջոյէլ Էրպով թաղեցէք,—ասում է ու խլոյն ետ դառնում, որ էլի գնայ առաջուայ տեղում պառկի. բայց ճանապարհին արտը կոխան լինելուց ազատ պահելու համար փորած մի փոս տեսնելով՝ «Այս ինչ լաւ գերեզման է, կարծես հէնց ինձ համար լինի փորուած. աւելի լաւ է սրա մէջ պառկեմ, թէ չէ՝ մէկ էլ ով է այն ահագին սարը բարձրանում», ասում է ու պառկում ննջեցեալի դիրքով ու քնում:

Լուսադէմին զանազան ձայներ են հասնում ականջին և զարթնում է: «Ի՞նչ անենք, թէ մեռած եմ», ասում է ինքն իրան, «արի, ինչ կըլինի կըլինի, գլուխս մի վերջին անգամ էլ բարձրացնեմ ու տեսնեմ, թէ ինչեր են անցնում այս անցաւոր փուչ աշխա. . .»: Հէնց այդ միջոցին զանազան դիւրաբեկ ապրանքներով բեռնաւորուած ջորիների քարաւանը հասնում է փոսի մօտ,—հետաքրքրութիւնից խօսքն անգամ չի վերջացնում և շտապ գլուխը բարձրացնում է թէ չէ, ջորիքը խրտնում են ու իրարոցով ընկնում, բեռները վայր ձգում, ոտի տակ տալի ջարդուփշուր անում:

Ջորեպանները մնում են ապշած, դէսուդէն խլրշկոտալիս. մէկ էլ տեսնում են որ փոսի միջից մի մարդու գլուխ է երևում: «Ը՛նհ», բացագանչում են և ստամ-

նին կրճատացնելով՝ մոլլի վրայ թափվում, փոսից դուրս հանում ու տուր Հա կրտաս — մէկ ծեծում, աղցան շինում. . .։ Ոնց որ է մէկ կերպով ձեռքներից ազատուելով, առանց այլևս ետ նայելու, մոռանալով անգամ իւր մեռած լինելը, պռկէ է անում դէպի գիւղ։

Հասնում է գիւղ հէնց այն պահուն, երբ յուղարկաւորները դուրս էին գալիս գիւղից, որ գնան բերեն թաղելու։

Գիւղացիք տեսնելով մոլլին կենդան ու դէպի իրենց վազելիս,—ուրախացած՝ իրանք էլ դէպի նրան են վազում և ամեն կողմից հարցակոծ անում.

— Ա՛յ դու բարո՛վ, ա՛յ դու հաղար բարի, մոլլա-Ջան. ո՞նց ես, ո՞նց չես. այդ ո՞նց եղաւ. ի՞նչ կայ այն աշխարհում, պատմիր մէկ տեսնենք. արդեօք լա՞ւ է. հանգի՞ստ է...

—Ա՜խ, ձեզ մատաղ, — պատասխանում է մոլլէն հոգիւ շունչ քաշելով,—ձեզ մատաղ, շատ լաւ է, շատ, էլ դրան խօսք չկայ, հանգի՞ստ. . . միայն թէ, դուք ու ձեր Աստուածը, զգոյշ եղէք, որ ջորի չիրտնացնէք. . .։

ԼԵՒՈՆ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

ԿՈՂԲԱՅ ՍԱՐԵՐ, ԲԱՐԴՈՂ ԼԵԱՌՆ ԵՒ ԱՂԱՒԱՆՔ

Եռ ոտք չդրած Կողբ գիւղի սահմանին, մարդ կարծում է, թէ Կողբ ասածդ ոչ պատմական, այլ մի առասպելական անուն լինի, ըստ որում մինչև այդ գիւղը՝ ճիշտ դասալիք զօրքի պէս ցան ու ցրիւ ընկած են առաջդ բարձր ու ցածր, կարճ ու հաւաք հարիւրաւոր հողաբլուրներ, ուր շէն ու աւան հաստատելու համար անյարմար են այն կողմից, որ չրկայ այդչափ ընդարձակութեանց վրայ ոչ մի զովարար աղբիւր կամ առու, որ պիտոյանար նրանց կող ու կշտին ընկած լայնածաւալ անխնամ դաշտերին ու հովիտներին։ Ընթերցող, երբ դեռ հեռու ես այդ հողաբլուրներից, դու կարծում ես, թէ Նախախնամողը որքան ծաղիկ ստեղծեց իւր բարերար ձեռքով, մէն միայն շաղ տուեց այդ բլուրների վրայ, աճեցնելու համար աւանդ տալով ամեն մէկին մի-մի գոյն. իսկ երբ հետաքրքիր ոգւով մօտենում ես դրանց փէշերին՝ (ամառն և աշնան ժամանակ), նկատում ես զարմանալով, որ նրանցից ամեն մինը մի-մի գոյն հողով է պատանուել։ Իսկ գարնան ժամանակ երբ նրանց ստորոտից մինչ իրանց խոնարհ գագաթները բազմում է ուրախարարն Մայիս ու իւր բազմագան շնորհքներ հողի հետ խառն ցանցառակի ներկում արեգական ցօղով ու շոքով, նրանք վառ 'ի վառ փայլ են տալիս, փայլ են առնում ճիշտ այնպէս, ինչպէս բազմաթիւ գունակ-գունակ ամպերի ստուերներ գարնանային մի պարզ երեկոյ մենք կրտեսնենք շաղ ընկած զուլալ լճերի ու գետերի մէջ։ Այսպէս ուրեմն, եթէ մենք ամառն ու աշնան ժամանակ այց կառնենք այդ հողանիւթ բլուրներին, նրանք մեզ երևան կրգան զանազան գոյն հողերով, իսկ եթէ գարնան ժամանակ, զանազան գոյն ծաղիկներով, որից կրհետևի

թէ, Արարչապետ Եհովայն բերել է դրանց լոյս աշխարհ երկու դարունով,— մինը ծաղկով, իսկ միւսը հողով։ Ոլոր մոլոր ուղիներով անցնելով պեղազուարճ բլուրների տակից, գտիվայր իջնում ենք մի ձորակ, որտեղից ձիով կամ ոտով ճգելով մի ծանծաղ գետակ, գարիվեր և գարիգուս ճանապարհներով ոտք ենք դնում մի գարիվան տեղի վրայ, որտեղից՝ մեր ոտքի տակ ազատ ու պայծառ մեզ յանդիման են գալիս Կողբը կիսով չափ և Բարդող լեռը իւր գունտ ու կլոր գոտիներով, որոնցից մի մասը՝ հիւսիսային կողմից գուշ են եկել [1]) Կողբայ անդ ու անդաստանի վրայ, գոգցես երկիւղալի դիպուածներում նրանց աստուածառաք սասումից [2]) պահելու ու պաշտպանելու համար, մի մասն էլ միմեանց ոտից բռնած կուտապ-կուտապ [3]) օձի պէս գլուխ են հանել մինչև Կաղզուան ու այնպէս վերջացել։ Իջնենք այժմ Կողբի մէջ։

Գիւղիս արևմտեան կողմն ընկած է սեպուհ Բարդող, իսկ յարևելից՝ հռչակաւոր Աղահանքը. սրանց արանքում իրանց շուք ու շուաքի տակ ազատ ճօճ է ընկել Կողբը, և որոց մինը որդեսէր հօր պէս ժամանակին հաց ու աղցան, իսկ միւսը աղ դնելով իւր բերանը, հարիւրաւոր տարիներով խնամարկել պահել են Եզնիկի այդ սրբազան հայրենիքը մինչ ցայսօր էլ անկեղծ և անթժառամ։ Բարդողը Մասիսի հաստ գոտիներից մինն է. Մասիսից մինչ Բարդող թէև կան շատ լայնանիստ ու խրխոտ սարեր, սակայն ոչ մինը իւր հրապուրելի և շքեղապանծ գագաթով չէ նման Բարդողին։ Բարդողի համանմանը եթէ Հայաստանի սրբազան սարերի մէջ փնտուելու լինինք, նոյն իսկ սարերն էլ մեզ կասեն, որ նա իւր գեղապատշաճ փոքր հասակով և կազմուածամբ իսկ և իսկ ընկած է մեծին Մասիսի քթից [4]), միայն այն զանազանութեամբ, որ նա Մասիսի նման՝ 'ի նշան անհիւրասիրութեան, յաւէտ սովոր չէ իւր գլխին ու ծոցերին միայն ձիւն և սառուց պահելու, իսկ սա էս ընդունակ չէ նրա պէս ամենայն դէպքում թէ մարդ, թէ անասուն շահել, մեծարել հիւրասիրաբար այն կենսատու և հարկաւոր պիտոյքներով, որոց ամենի ամբարը զատ-զատ մենք կրգտնենք այդ նուիրական սարի վրայ, ինչպէս յետոյ կըտեսնենք։

Գալով Բարդողի միահամուռ արտաքին գեղեցկութեան ու

---

[1]) Գուշ գալ—իրար վրայ բարդուիլ։ [2]) Աստուածառաք պատիժ։ [3]) Գալարուն։ [4]) Քթից ընկնել—նմանուիլ։

վայելուչ կազմութեան, անքննելի բնութեան մէջ որչափ որ կան ակնպարար վայրեր, նրանցից մինը համարուելու է և Բարդողը։ Նա ամեներանեալ բնութիւնից նախշուած ու փառազարդուած է այս չորս անգնահատելի ակներով, այսինքն, քարով, հողով, ջրով և ծաղկով կամ խոտով՝ ու Հայաստան մնած այս տարազով, իւր հոլանի գլխից մինչ իւր պարանոցը նա հագել է բաց սև քարեայ ծալ ծալ կարճ վերարկու, իսկ իւր պարանոցից մինչ իւր բազկատարած բազուկները, նա շքեղազարդուել է ամեներանգ քարեայ փոնդ եկած [1]) ամղանով (բաճկոն.) իսկ բազուկներից մինչ ոտերը անխնայ պատառուելով այդ ամղանը, կախ են ընկել իւր հաստ չոքերի [2]) վրայ մերթ կարճ, մերթ երկար, մերթ լայն, մերթ նեղ հազար ծլանքներ [3]), ու այնպէս ծածկել իւր դարշապարը։ Հարկաւ մի այս տեսակ ամղան կարելու համար ասեղ ու թել էլ պէտք էին. ուստի այդ ասեղն ու թելն էլ եղել են իւր բազմատեսակ հողը, ազգի-ազգի խոտերն ու երփներանգ ծաղիկները, որոց բազմարուեստ մայր բնութիւնը շռայլօրէն ձեռք առնելով, որչափ զօրել է իւր հանճարն ու կարողութիւնը, այնպէս է կար ու շուալ գնացել այդ ամղանի վրայ։ Իսկ այդ ամղանը մերթ ընդ մերթ լուանալու համար, ջուր բերելու ցանկութեամբ՝ նա հարկ չէ համարել փոքր ինչ իրանից հեռու ոչ Երասխ ոտք ծեծել և ոչ Ախուրեան վազել, այլ ունի նոյն իսկ այդ երանաւէտ լերան բաշխած և զանազան յորդաբուղխ և բարեհամ ջրեր, աղբիւներ ու վտակներ, որոնցով ըստ ժամանակին արդարև լուանում է իւր բարդ օղերից ճարմանդուած ամղանը։ Այսպէս ուրեմն, երկրիս հրահայլիքը, նրա անքննելի ծոցերի մէջ և դուրսը ամենատեսակ քարեր և հողեր քննող և որոնող մի նրբազննին հանքաբանի համար ճիշտ մի թանգարան է Բարդողը, ուր կրգտնի նա իւր ցանկալի որոնելիքը առանց նեղութեան և դժուարութեան։ Այսպէս էլ մի քաջ բուսաբանի համար մի խնկելի պարտէզ է նա, ուր ամենանոյշ ծաղիկներից սկսած, կրգտնի նա այդտեղ և ամենատեսակ բոյսեր ու բանջարներ, որոց ամենի մի քանի տեսակը խառնիխուռն կրդնեմ այստեղ, իմ պատուական ընթերցողին Բարդողի հարստութիւնը ցոյց տալու համար. բողաղ, հլէզ, հաւի ծիլ, գաբ, գրքոն, խուուկ, թրթնջուկ,

---

[1]) Փոնդ գալ—հանդերձի մէջ եղած կարուածքի անհարթութիւն։
[2]) Ծունկ։ [3]) Հանդերձից պատառուած ու կախ ընկած կտոր։

դառնիճ, գաղտի կուռ, գիմ, դուրդուզան, դառան դմակ, իրի-ցանուկ, քոս միրուք, սինձ, եզան լեզու, ծտի աչք, շնսխտոր, ծնեբեկ, կարմիր պուտ, լայազար, խնկան ծաղիկ, պատուական բոխ, թուլթիան, մանդակ, քորոտ, եօթն աղբօր արիւն, բոլիկ, շնբոլիկ, հաւորիկ, փշփշուկ, բալդրղան, շուշան, ուռց, Եայլն Եայլն։ Այս լեռն աղքատ չէ նաև դայլայլիկ ու քաղցրախօս թռչնոց կողմանէ, որոց մէջ նշանաւորներն են կաքաւ, ղազալախ, սոխակ և թուրաջ։ Վայրենի կենդանեաց կողմանէ ևս եղել է երբեմն և արագավազ եղջերու, երբ տակաւին իրանց բազմաթիւ հօտերով ու նախիրներով չեն յաճախել այդտեղ վրանաբնակ քըրդեր, ինչպէս որ այժմ անուն են այդ, գարնանից մինչ աշուն ազատ ապահովանալով իւր վրայ։ Իսկ այս բոլոր Բարդողի գլխին թափած բնութեան առատապարգև տուրքերը գարնան ժամանակ մի տեղ առնելով, ըստ ճոխ հէքեաթից, Բարդողին կարծես մի շքեղազարդ հարսի պէս թափ են տուել ու դուրս հանել մի հրեղէն ծովից։ Երբ Իտալիայի աննման լեռների գեղեցկութեանց վրայ մեզ զանազան հագներդութիւններ են ճառում, պատմում հմուտ աշխարհագէտք, մենք սառուց կտրած ապշում զարմանում ենք, այսպէս դատելով մեր մէջ թէ, Աստուծոյ գեղեցկութիւն նկարող մատը միայն դիպաւ Իտալիայի լեռների վրայ և ոչ մի տեղ. իսկ ես կաւելացնեմ, Աստուած՝ մարդոց իւր գեղեցկութեան շնորհաց հետ ծանօթացնելու համար միայն Իտալիայի լեռների վրայ ձեռք չդրեց, այլ և Բարդողի վրայ էլ բազուկ պարզեց։

Բարդողի նկարագրութիւնը ամբողջացնելու համար, ես չեմ զլանալ՝ ըստ աւանդութեան ժամանակին իրան պատահած այս մի նշանաւոր դէպքն ևս յիշելու, որ տակաւին ռամկաց մէջ իբրև մի անսուտ պատմութիւն է դառել. այսինքն, աշխարհահռչակ արին Քեօրողլի իւր մարդախոշոշ ընկերներով հազար լեռներ, հազար սարեր 'ի նանիր պտոյտ տալէն ու հետևապէս իրան անչափ վայելչասիրութեան համար ոչ մի տեղ մի յարմար և ապահով դար և դադար չըգտնելէն զկնի շնչասպառ եկաւ հասաւ այս լեռը, ուր իւր վայելչասէր հաճոյից բոլորովին յարմար գըտնելով, անմիջապէս իւր սայրասուր տէգը ձիու վրայից թափ տուեց և ուժգին հարստեց սրա գագաթին, և, «Այսուհետև սա պիտի լինի քաջին Քեօրողլուի համար ապահով տուն և կայան», ասելով, վար իջաւ ձիուց և անարգել տիրապետեց այս սիրուն վայրին, որի հռչակաւոր անուամբ լեռն էլ կոչուեցաւ և կոչվում է այժմ ոչ Բարդող, այլ Քեօրողլուի սար։ Սրանից կարելի է մա-

կաբերել, թէ ժամանակին քաջ և արի համարուած մարդոց համար ամենայն վայր, ամենայն լեռ, չեն եղել վայր և լեռ, եթէ նրանք իրանց դեղեցկութեամբ և փառահեղութեամբ, բեր սրա վրայ և անվտանգ ապրելու համար ամեն յարմարութեամբ չեն երանուած քաջերից, կամ քաջեր չեն բնակուած եղել այնտեղ։ Իսկ այսպիսի լեռները մեծարելի էին նրանց աչքին այն կողմից, որ թէ ազատ հանդէս էին բերում իրանց թոռք ու սրտի հետ համարձակ մեծացած իրանց բոցավառ կրքերը, որոնք երբեմն աշխարհի բարութեան և երբեմն չարութեանց առիթ էին լինում, և թէ հետևապէս այդպիսիները մի առանձին փառք և պատիւ էին համարում իրանց, որ իրանք աթոռակալել են այս ինչ կամ այն ինչ անուանի լերան գլխին։ Իսկ երբ դրանք մի դիպուածով կամ մահով հրաժեշտ էին տալիս իրանց բնակավայրից, այդ բնակավայրը նախ կնքում, մկրտում էին իրանց վեհապանծ անուամբ և ապա այնպէս ոռք դնում կամ գետին կամ դերեզման։ Արդ՝ բարդողն էլ այս կարգի լեռներից մինը լինելով, շատ կարելի է թէ և ստոյգ լինի ժողովրդեան մէջ հռչակաւոր Քեօրոդլուի մասին տարածուած վերոյգրեալ պատշաճաւոր ասուլիսն էլ, եթէ ըստ անուտ պատմութեան Անաքել վարդապետի մենք կըհաւատանք որ արդարև կար ժամանակին մի Քեօրոդլի, որ սարսափեցնում էր բոլոր աշխարհ իւր ահեղաստուտ հրամանով, անպարտելի ոյժով և անօրինակ քաջութեամբ իւր քաջակէն ընկերների հետ։ Իսկ այս բնական է, ուր ուրեք պատմվում են մեզ մի գործ, լինի նա թէ չար և թէ բարի, մենք սովոր ենք գործողին քաջ՝ իսկ իւր կատարած գործին քաջութիւն մակդիրներն տալ. չմոռանամ ասել, իսկ այն վայրը, ուր կատարել է նա իւր անօրինակ քաջութիւնները, թէ անգիր ռամիկ լինինք, թէ գիտուն քաղաքացի, այնուամենայնիւ այդ վայրը մնում է մեր մէջ մի անմոռաց տեղի, որի անունը լսելիս՝ եթէ սոսկալի չարիքներ են գործուել այդտեղ, մենք սոսկալով փշաքաղվում ենք՝ անիծելով այդ վայրը. իսկ եթէ անպատում բարիքներ՝ մենք անպատում ուրախանում ենք՝ օրհնելով այդ վայրը։

Յայտնի է պատմութիւններից, երբ Յունաց Հերակլ կայսրը Փրկչին Յիսուսի Պարսկաստան գերուած կենսատու Խաչը իւր խնդրանօք ստացաւ պարսից Խոռեմ թագաւորից, նոյն տարին, այսինքն 615 թուականին՝ Կարինում մի դաս հոգևորականներից կազմեց մի ժողով, 452 թ. կազմած Քաղկեդոնի ժողովը ընդունել տալու համար. այս ժողովը, յունաց զօրավար Մժէժ գը-

նունուոյ դրդմամբ և ստիպմամբ ընդունեց և մեր Եզր կաթողիկոսը, և այս իսկ պատճառաւ ըստ խնդրանաց Եզրի, կայսրն էլ 'ի պատիւ իրան ընծայեց միայն Կողբայ հանքը, իսկ ուրիշ պատմութեանց նայելով՝ գիւղն ևս [1]։ Եւ որովհետև ժամանակին զանազան տէրութիւններից մեր կաթողիկոսներին ընծայուած՝ կամ նոյն իսկ մեր կաթողիկոսների երբեմն իրանց սեպհական դոյքով և երբեմն էլ սուրբ Էջմիածնի արդիւնքով գնուած անշարժ կալուածները նրանց մահից յետ մնում էին ի մշտնջենաւոր սեպհականութիւն Ս. Էջմիածնի, այս պատճառաւ էլ անտարակուսելի է, որ Եզրի մահից յետ Կողբը իւր հանքով հանդերձ չըմնար վանքին, թէև 'ի հաստատութիւն այս բանիս բացորոշ չեն խօսում ոչ ժամանակի պատմիչք, և ոչ նոյն իսկ բազմերախտ և բազմաշխատ Սիմէօն կաթողիկոսն ևս Ս. Էջմիածնի հետ կալուածների շարքում ունի թուած Կողբն ևս իւր Ջամբռ անուանեալ պատուական գրքի մէջ։ Կողբը այժմ պատկանում է ռուսաց բարեխնամ տէրութեան։ Սուրբ Էջմիածինը իբրև նուէր, համաձայն աղահանքի վերաբերեալ ռուսերէն կանոնագրքի 801 յօդուածին, ամենայն տարի ստանում է նրա հանքից 200 բեռն կամ 800 քար՝ աղ. ըստ այմ «Էջմիածնի վանքին, ըստ վաղեմի սովորութեան իւրաքանչիւր տարի ձրիաբար նշանակվում է 200 բեռն կամ 800 քար [2]։ Յիշեալ աղը աղահանները ամբարում են ձրի։ Վանքը պարտաւոր է տարին երկու նուագ տանել իւր աղը և չունի իրաւունք իւր տեղում վաճառելու»։ Աղահանքի պահպանութեան համար Կառավարութիւնը նշանակում է իւր ժամանակին յատուկ մի կառավարիչ իւր օգնականներով հանդերձ. նա բոլոր տարին նստում է այդտեղ և հսկում աղի խնամքով կտրելու և նշանակուած գնով վաճառելու վրայ, որպէս կանխօրէն որոշած է ինքը կառավարութիւնը։ Հանքի ստորոտում բաւականին տարածութեամբ դետնի վրայ գրկաչափ բարձր կայ քառակուսի պարիսպ, ուր կառավարութեան այդ պաշտօնէից համար շինուած են բարձրաշէն և հոյակապ բնակարաններ իրանց բոլոր յարմարութեամբ. այսպէս էլ այդ բնակարաններից բացատ կան շինուած հինգ լայն և երկարաձիգ աղի ամբարներ, ուր աղը տեղատարափ անձրևներից և խոնաւութիւնից չըփչանալու հա-

---

[1]) Սեբէոս գլ. բ.։ Կիրակոս պատմ. երես 31։ Ջամբռ գլ. բ.։ [2]) Մի բեռը 9 փութ է, իսկ մի քարի կշիռն է 2 փ. 10 ֆ. ամբողջ տարուանը՝ 1800 փութ։

մար, ահագին քանակութեամբ բարդում են այդտեղ ամեն կարգի պատրաստի աղ և վաճառ հանում հարկաւոր դէպքերում։ Աղը առաջին ժամանակներում կտրում էին մրճով քար առ քար, և այդ միակտուր աղը կոչվում էր խաչքար, որի ծանրութիւնը պիտի լինէր 2 փ. 10 ֆ. ինչպէս որ տեսանք. այժմ կառավարութիւնը այդ տաժանակիր աշխատութիւնը թեթևացնելու համար, սահմանել է վառօդաձիգ անել։ Այս հանքը, իւր պատուական, ընտիր ու համեղ աղի կողմից Հայաստանում գտնուած աղերից գրեթէ գլուխ և առաջինն լինելով, հետևապէս և դնողների թիւը համեմատութեամբ միւսների աւելի շատ, կապալի ժամանակ լիաձեռն դրամով աներկիւղ և համարձակ միմեանց դէմ 'ի պայքար են մտնում շատ ականաւոր մարդիկ ու վաճառականք։ Երեք տարի ժամանակաւ, այն է 85 թուի յունիսի 2-ից մինչև տարւոյս յունիսի 2-ը, 36000 ռուբլի կապալաւ վերցրել է Դալալագեազի դաւառից մերազնեայ սլ. Զաքարիա Ջամփոյատեանց հետագայ պայմանաւ, նա առաջին երկու տարիներում որչափ որ կուզէ իւր սիրտը կարող է անհաշիւ ծախել. իսկ վերջին տարում, դիտութեամբ արքունի կառավարչի իրաւունք ունի միայն ծախելու 800,000 փութ. 600,000-ը խոշոր տեսակից, փութը 10 կոպէկով, իսկ 200,000-ը խիճ տեսակից, փութը 5 կոպէկով։

Ընթերցող, եթէ վերև տողերի քո առաջ Կողբայ սարեր և Բարդոզ լեռ, իմ փափագս այն էր, որ դու նրանցով ծանօթանայիր Աստուծոյ՝ Բարդոզի ձեռքով մեզ բաշխած առատ և բիւրաւոր բարիքների ու պարգևների հետ. այժմ էլ կըգրեմ քեզ Աղահանքը, որ դու զարմանաս նրա մեծութեան վրայ։ Աղահանքը մօտ երկու վերստ երկայնութեամբ կոնաձև ու տաշտաձև ելևէջներով իջնում է Կողբայ արևելեան անդերի վրայ, որոց տակից օձապտոյտ փախչում է և լալկանն Երասխ։ Իսկ իւր լայնութիւնը գրելու համար դժուար է ինձ մի որոշ բան ասել, վասն զի իւր հարաւային կողմից կան շատ խոտոր կտոր սարեր, որոց ոմանց յայտնի աղ լինելը երևում է այն նշանից, որ իրանց ստորոտք շուրջանակի բակ են առած աղի եղեամով. իսկ ոմանք էլ այդ նշանը չունին, բայց թէ ունին արդեօք իրանց մէջ աղի սերմ և ունդ, այդ ևս անգիտելի է։ Ամբողջ հանքը մի զարմանալի տեսարան է կազմում։ Կողբի արևելեան երկայնութեամբ նա վերամբարձել է վսեմ ու խորխոտ ձևով և մի տեսակ անառիկ ու ամուր պատնէշ դաւել ամբողջ Կողբին։ Իւր վիթխարի

կազմուածքն էլ ճիշտ չարաչար խոցուած զինուորի կրնմանի. սկսած հին դարերից, մարդիկ՝ նրա ցցուած լանջերից ու կրծից դէպ ներս բրել պեղել են այնչափ, մինչև առատ աղի ջուր է հոսել և ապա դադար են առել իրանց աշխատանքից ու մի ուրիշ տեղ ձեռք զարկել։ Թէ որչափ աղի տեսակ ունի այս հանքը, այդ կարելի է իմանալ այն խորանաձև փորուածներից, ուր պարզ երևում է ամենայն ինչ և ինձ պատահեց այս երեք տեսակը միայն, կարմիր, սև և շուշ կոչեցեալ աղ, որից հմուտ աղահատներ առնելով, գեղեցիկ կերպով պատրաստում են խաչ, աւետարան, գրասեղան, աղաման, համրիչ և այսպէս ամեն տեսակ կարասիք։

ՍԱՀԱԿ ԱՌԵՂԱՅ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՅՈՎՆԱՆԵԱՆ

Հիմնադիր

Մարիամեան Յովհաննեան-օրիորդական դպրոցի

(Ա. Բէկդտոովից)

ԵՐԿՐԻՍ ԵՒ ԻՐ ՎԵՐԱՑ ԵԼԱԾ ԱՐԱՐԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԶՐՈՅՑՆԵՐ

Քի որ և է շէնք կառուցանելու համար, դիցուք՝ եկեղեցի, տուն և այլն, նախագծում են թղթի վրայ շինութեան մակարդակը։ Մակարդակի ցուցման համեմատ՝ դեռևին չափում են թոկով կամ մի այլ երկարութեան չափով և այդպիսով որոշում շինութեան տեղը։ Կառուցած շէնքից ևս կարելի է վեր առնել նրա մակարդակը։ Մակարդակի մէջ գլխաւորը երկարութեան չափն է։ Այդ չափը գծում են մակարդակի ներքևում, մի կողքի վրայ։ Երկրաչափները դրան ասում են մասշտաբ, որ նշանակում է չափելու ձող կամ դաւազան։ Այդ ձողը մի գիծ է, բաժանուած մի քանի միմեանց հաւասար մասերի։ Խօսինք այժմ դրա մասին։

Դիցուք հարկաւոր է վեր առնել այն քաղաքի մակարդակը, որտեղ ես եմ բնակում։ Դրա համար կըվերցնեմ մի թերթ թուղթ, վրան կըքաշեմ մի ուղիղ գիծ. թող այդ գիծը լինի մի բթաչափ կամ մի վերշոկ։ Այդ վերշոկը համարում եմ մի վերոյի փոխարէն։ Ասենք թէ քաղաքի մի ծայրից մինչև միւս ծայրը երեք վերստ է, ուրեմն մակարդակի վրայ կըվերցնեմ նրան երեք վերշոկ երկարութիւն ունեցող գծի վրայ։ Եթէ քաղաքի մի որոշ մասը, դիցուք հրապարակը, քառորդ վերստ է, կըվերցնեմ մակարդակի վրայ քառորդ վերշոկի մէջ։

Ենթադրենք որ վերշոկը ընդունում եմ կէս վերստի փոխարէն. ուրեմն քաղաքը մակարդակի վրայ կունենայ վեց վեր-

շոկ երկարութիւն, իսկ հրապարակը կըլինի կէս վերշոկ։ Թող լինի վերշոկը հարիւր սաժէնի փոխարէն ընդունուած, այն ժամանակ քաղաքը մակարդակի վրայ կունենայ 15 վերշոկ երկարութիւն, որովհետև մի վերստը հաւասար է 500 սաժէնի։ Թող այն չափը, որով չափում ենք գետինը, հաւասար լինի 100 սաժէնի և այդ ընդունենք մի վերշոկի տեղ։ Եթէ հիմա այդ վերշոկը բաժանենք 10 հաւասար մասերի, ապա իւրաքանչիւր մի մասը կըպարունակէ իր մէջ 10 սաժէն։ Կարելի է իւրաքանչիւր մասը կրկին անգամ բաժանել երկու հաւասար մասերի, ուրեմն իւրաքանչիւր մի մասի մէջ կըպարունակուի 5 սաժէն։ Չափն այսպէս պատրաստելուց յետոյ, կարող ենք սկսել մակարդակը։ Ենթադրենք որ սկսում ենք գլխաւոր փողոցից. եթէ փողոցն ուղիղ է, և պարունակում է իր մէջ՝ դիցուք՝ 500 սաժէն, այսինքն մի վերստ, գծենք ուրեմն թղթի վրայ մի ուղիղ գիծ և դրա վրայ հինգ վերշոկ չափելով, սահմանենք դիծը. այդ հինգ վերշոկի մէջ գտնվում է հինգ ամբողջ ձող։ Եթէ փողոցի լայնութիւնը, օրինակի համար, 20 սաժէն է, ապա կըքաշենք առաջին գծից հաւասար հեռաւորութիւնով մի ուրիշ գիծ և.ս, այնպէս՝ որ երկուսի մէջտեղի տարածութիւնը ամենայն տեղում հաւասար լինի չափի երկու մասին, այն է՝ վերշոկի երկու տասներորդականին, վերոյիշեալ բաժանման համաձայն։ Քանի որ ուղիղ ճանապարհ ենք չափում, հեշտ է թվում ամեն բան, բայց երբ բանը վերաբերում է ծուռնումուռ ճանապարհի, կամ թէ՝ երբ հարկաւոր լինի չափել մի այլ ճանապարհ, որ ուղղակի կտրում անցնում է առաջինը, այդ դէպքում երկարութեան չափը բաւական չի լինում։ Որպէս զի այդպիսի ճանապարհներ ևս կարողանանք չափել և թղթի վրայ գծել, հարկաւոր կըլինի մեզ գիտենալ թէ ինչ է ԱՆԿԵԱՆ։ Վեր առէք երկու քանոն, դրէք մէկը միւսի վրայ, ըստ երկարութեան. տակի քանոնը թողեցէք անշարժ, իսկ վրայի քանոնի մի ծայրից բռնեցէք և բարձրացրէք այնպէս՝ որ միւս ծայրը միշտ մնայ տակի քանոնի վրայ. հիմա դուք նկատում էք որ երկու քանոնի մէջ տեղում մի տարածութիւն է բացուել. ահա այդ տարածութիւնը կոչվում է անկիւն։ Այն տեղը՝ ուր երկու քանոնի ծայրերն են գտնվում միմեանց վրայ՝ կոչվում է անկեան գագաթ. քանոնները կազմում են անկեան երկու կողմերը կամ սրունները։ Նայելով թէ ինչքան եմ հեռացնում երկրորդ քանոնը առաջինից, ըստ այնմ էլ անկիւնը կըմեծանայ։ Կարող եմ երկրորդ քանոնը բարձրացնել

շատ կամ քիչ, ըստ այնմ անկիւնը կըլինի մեծ կամ փոքր։ Երկու քանոնի մէջ տեղում գտնուած տարածութիւնը չի փոխուիլ, որքան էլ քանոնները երկար լինէին կամ կարճ. ուրեմն անկեան մեծութիւնը չի կախուած կողմերի երկարութիւնից կամ կարճութիւնից։ Անկիւնը կարելի է բացատրել ուրիշ կերպով ևս, ինչպէս ցոյց է տրուած 1-ին ձևում։



Գծ. 1.



Գծ. 2.

Երբ որ երկու ճանապարհ միմեանց կտրում են, կտրած տեղում կազմվում է անկիւն։ Այդ անկիւնը պէտք է թղթի վրայ դնել, այսինքն մակարդակի վրայ գծել. դրա համար հարկաւոր է գիտենալ անկեան չափերը։ Անկիւնները չափում են շրջանի աստիճաններով։ Բացատրենք թէ ինչ է շրջանը և ինչ է աստիճանը։ Վերցրէք մի գնդասեղ, խրեցէք թղթի մէջ. գնդասեղի ստորին ծայրից կապեցէք մի թել և թելի միւս ծայրին բռնեցէք մի մատիտ. թելը ձգեցէք և մատիտը շրջեցէք գնդասեղի շուրջը, բայց աշխատեցէք որ թելը չըփաթաթուի գնդասեղին։ Մատիտի ծայրը գծեց թղթի վերայ մի շրջան. այն կէտը, ուր ցցուած է գնդասեղը, կոչվում է կենտրոն կամ միջնավայր շրջանի։ Մատիտի ծայրով գծած կլոր գիծը շրջագիծ է ասվում. կենդրոնից մինչև շրջագիծը ձգուած թելը կոչվում է շառաւիղ կամ շառաւիղ։ Այսպիսի շառաւիղներ կարելի է քաշել խիստ շատ և բոլորը միմեանց հաւասար կըլինին։

Քաշեցէք այժմ երկու շառաւիղ այնպէս, ինչպէս որ երկրորդ ձևի մէջ ցոյց է տրուած. ահա կըստանաք դուք անկիւն։ Շառաւիղները նրա կողմերն են, իսկ կենդրոնը՝ նրա գագա-

թը։ Որքան շառաւիղներ էլ որ քաշելու լինիք, անկիւններ կըստանաք. բայց դրանք միշտ չեն լինիլ հաւասար միմեանց։ Նոյն ձևի մէջ երևում է, որ անկիւնների կողմերի ծայրերը դիպչում են շրջագծին. շրջագծի այդ մասը, որ կապում է երկու շառաւիղների ծայրերը, կոչվում է աղեղ։ Ահա այդ աղեղովն են չափում անկիւնները։

Շրջագիծը սովորաբար բաժանում են 360 հաւասար մասերի. իւրաքանչիւր մի մասը կոչվում է աստիճան. ուրեմն՝ անկիւնները չափում են այդ աստիճաններովը։ Եթէ ասենք այս ինչ անկիւնը 90 աստիճան է, կընշանակէ որ երկու շառաւիղների ծայրերը կապող աղեղն ունի 90 աստիճան (90°), այսինքն՝ հաւասար է շրջանի մի քառորդին (¼)։ Եթէ անկիւնը 45° է, ուրեմն և աղեղն 45° է, որով չափվում է անկիւնը. ուրիշ խօսքով, այդ աղեղը շրջանի մի ութերորդ մասն է։

Ուրեմն պէտք է իմանալ թէ շրջանի շրջագծի քանի երրորդ մասն է գտնվում երկու աղեղների մեմեանց կտրած միջավայրում։ Այդ գտնելու համար տնկենք մի ցից այն կէտում, ուր որ երկու ուղիները կտրում են միմեանց։ Կապենք ցցի վերայ երկու չուան. ձգենք նրանցից մինը մի ուղիով, միւսը՝ երկրորդով. ահա ստացանք մի անկիւն, որ գտնվում է երկոքին ճանապարհների միջև։ Այժմ հարկաւոր է իմանալ, թէ այդ անկիւնը քանի՞ աստիճան ունի։ Դրա համար պէտք է ունենալ մի սղնձեայ փոքրիկ աղեղ, կամ ինչպէս ասում են՝ գոնիոմետր, որ տեսնում էք նկարուած 3-դ ձևի մէջ։ Սա մի կիսաշրջան է՝ աստիճանների բաժանուած։ Ամբողջ շրջանը 360° ունի, ուրեմն կէս շրջանը կունենայ 180°։ Պատկ. վերայ դրուած խաչը ցոյց է տալիս ամբողջ շրջանի կենդրոնը։ Գետնի վերայ դրէք մի այդպիսի սղնձեայ կիսաշրջան, այնպէս՝ որ դաւազանը կամ ցիցը ճիշդ նորա կենդրոնի վրայ դայ և երկոքին չուաններն էլ անցնեն նրա վրայից. թուեցէք այժմ



Գաւ. 3.

թէ քանի՞ աստիճան կայ այդ երկոքին չուանների միջև։ Այդ իմանալով, դուք իմացած կըլինէք թէ քանի՞ աստիճան ունի այն անկիւնը, որ կազմուած է երկոքին ուղիներից։ Փոխադրեցէք այժմ պղնձեայ կիսաշրջանը մակարդակի վրայ, այնպէս՝ որ առաջին ուղին (այն՝ որը դծուած է), անցնի կիսաշրջանի կենդրոնից, թուեցէք հիմա դէպի այն կողմը, որ ձեզ պէտք է, այնքան աստիճաններ, որքան երկոքին ուղիների միջև գտնուած անկիւնում կայի. և այդպիսով մակարդակի վրայ կըստանանք միևնոյն անկիւնը։ Եթէ ճանապարհը ծրռմռուած է, պէտք է չափել նրա ամեն մի թեքուածքի վրայ կազմուած անկիւնը և նոյնպէս փոխադրել մակարդակի վրայ։

Այսպէս են չափում անկիւնները. միևնոյն ժամանակ չափելու համար գործ են դնում չափը կամ ձողը, պղնձեայ կիսաշրջանը, ցիցը կամ գաւազանը և չուանները։ Մակարդակի վրայ գծելով բոլոր ճանապարհները, քաղաքի հրապարակները տների բակերը և բոլոր թաղերը, սոյն կերպ կարելի է չափել նաև դաշտերը, անտառները, կարճ ասել՝ երկրիս վերայ եղած բոլոր տեղերը և փոխադրիչով դնել մակարդակի վրայ։ Բայց եթէ հանդիպի մեզ լայն գետ, ծովածոց, մեծամեծ լճեր, և այլն, այն ժամանակ բանը կը փոխուի։ Այդպիսի դէպքերում հարկաւոր կը լինի մեզ ծանօթ լինել եռանկիւնիների չափելու կանոններին որպէս զի գիտենալով գետերի, լճերի, ծովածոցերի և այլն լայնութիւնները, առանց անցնելու նրանց միւս կողմը՝ կարողանանք չափել։

Այստեղ նկարուած են երկու եռանկիւնիներ, իւրաքանչիւրն ունի երեք անկիւն և երեք կողմեր. ուրեմն եռանկիւնի է կոչվում այն մակերևոյթը, որ ամենայն կողմից շրջափակուած է երեք ուղիղ գծերով և դրքա միմեանց կտրում են։ Չափենք առաջին եռանկեան կողմերից մինը. այս դէպքում ստորին կողմը չափենք։ Այդ կողմը հաւասար է կէս վերշոկի (4 ձևի մէջ)։ Չափենք նոյնպէս այդ կողմի վերայ գտնուած երկոքին անկիւնները. դոցա իւրաքանչիւրն ունի 45°։ Այդքանը բաւական է մեզ դորա պէս մի այլ եռանկիւնի գծելու, թէկուզ միւս մասերը մեզ յատ-

Ձև 4.



Ձև 5.

նի էլ չըլինէին։ Արդարև՝ գծեցէք մի ուղիղ գիծ, կէս վերշոկ երկայնութիւնով. դա կըլինի ներքին կողմը։ Այժմ դրէք այդ գծի մի ծայրին պղնձեայ կիսաշրջանն այնպէս, որ գծի ծայրը կիսաշրջանի ճիշդ կենդրոնի վրայ գայ. թուեցէք այժմ այդ գծից և շրջանի վրայով ճիշդ 45°։ Նոյնն արէք գծի միւս ծայրի վրայ ևն։ Այժմ անկիւններն իմացաք. քաշեցէք ուրեմն քանոնով երկու գիծ, մինը գծի աջ ծայրից, միւսը՝ ձախ. այդ գծերը դէպի վեր քաշեցէք կամ դէպի վար այնպէս, որ առաջին գծի և այդ նոր քաշած երկու գծերի միջև գոյանայ մի անկիւն։ Այդպէս և միւս ծայրից։ Հիմա այդ գծերը միմեանց կը կտրեն մի տեղում և կը կազմեն մեր որոնած եռանկիւնը։ Այս միևնոյնը կարելի է անել երկրորդ, երրորդ և ուրիշ շատ եռանկիւններ կազմելու համար։ Ուրեմն՝ եթէ յայտնի են մեզ եռանկեան երկու անկիւններն և նրա մի կողմը, որի վրայ դրուած են այն անկիւնները, ապա կարող ենք գտնել ամբողջ եռանկիւնը։



Լ. 6.

Դիցուք կամենում ենք չափել մի գետի լայնութիւն, որից անցնել չենք կարող։ Դրա համար գետի եզերքին մի շարքի վրայ կըտնկենք երկու գաւազան և նրանց մէջ կըձգենք մի չուան. դա կըլինի եռանկեան մի կողմը։ Կը չափենք այդ կողմի երկարութիւնը, դիցուք 100 սաժէն լինի դա, այդ կըգրենք։ Գաւազաններից մէկին մօտենալով, կընայենք գետի դէպի միւս եզրը, այդտեղ նշան կ'անենք մի որ և է առարկայ, որ լինի եզրին մօտիկ։ Նայելիս քանոնը կըբռնենք մեր աչքին այնպէս,

ինչպէս հրացանաձիգը նայում է նշանակէտին։ Նշանակէտը գտնելուց յետոյ, քանոնը կամաց ցած կը դնենք չուանի մի ծայրի վրայ. այդպիսով գտած կըլինինք եռանկեան մի անկիւնը։ Այս միևնոյն կերպով կարող ենք գտնել եռանկեան երկրորդ անկիւնն ևս, հիմա երրորդն արդէն ինքն իրան գտնուած է. գետի միւս կողմի նշանը կըլինի եռանկեան երկրորդ անկիւնի գագաթը, ըստ որում եթէ քանոնի ուղղութիւնով գծեր քաշենք, այդ գծերը միմեանց կըկտրէին մեր դիտած կէտում *։ Որպէս զի թոկերն ու գաւազանները միշտ ման չածենք հետներս, հարկաւոր է նկարել թղթի վրայ փոքր ձևով մի եռանկիւն, այն միևնոյն չափերով, որոնց մասին խօսեցի սկզբում։ Գտնելով գետի միւս եզրում եռանկեան գագաթը, նոյն գագաթից պէտք է քաշել մի ուղիղ գիծ եռանկեան այն կողմի վրայ, որ սկզբում չափել և ճանաչել ենք։ Գագաթից քաշած գիծը կանցնի գետի ճիշդ լայնութեան վրայով. հիմա մակարդակի վրայ չափեցէք դրան և կիմանաք գետի լայնութիւնը։ Որպէս զի այդ գիծը ուղիղ լինի քաշուած եռանկեան մեզ յայտնի կողմի վրայ, պէտք է աշխատել որ նա չըշեղուի ոչ աջ և ոչ ձախ. այդ դէպքում մեզ յայտնի գծի վրայ էլ կը կազմուին երկու միմեանց հաւասար անկիւններ, ամեն մէկը կունենայ 90°։

---

* Աշխատեցէք որ չուանի ծայրին քանոնի մէջտեղը անպատճառ 45°-ի մի անկիւն կազմուի գետի միւս եզրի նշանը դիտելիս. այս միևնոյնն արէք չուանի միւս ծայրի մօտ ևս։ Այս անելուց յետոյ, չուանի երկարութիւնը չափեցէք և անկիւնների հետ՝ փոքրացրած չափով գծեցէք մակարդակի վրայ։

Ս. Գ. ԲԷԳ ՆԱԶԱՐԵԱՆՑ.

(Կըշարունակուի)

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ֆոնոգրաֆ։—Անգլիական լրագիրները շատ են գրում Էդիսոնի կատարելագործած ֆոնոգրաֆի մասին. օգուտը, որ նա կարող է տալ շատ է եւ բազմօրինակ. շատ հետաքրքրական փորձեր արդէն տրուած են։ Նիւ-Եորկում երեք նշանաւոր արտիստներ ածեցին պիանոյի, ջուլթակի, վինի վրայ։ Էդիսոնի նոր ֆոնոգրաֆով երեքն էլ ամենայն յաջողութեամբ փոխադրուեցան Լոնդոն. ֆոնոգրաֆը շատ փոքր է եւ մի մարդ կարող է ման ածել։ Մետալական թերթիկները այնպէս են սարքուած, որ ձայնի ամենափոքր հնչիւնը նրանց շարժում է եւ տպաւորում է գործարանի մէջ, որ մի քանի ամսից յետոյ ամենայն ճշտութեամբ յետ է հաղորդում ընդունած ձայները։ Կանդիտատները եւ պատուիրակները փոխանակ անձամբ շրջելու գաւառները, կարող են ֆոնոգրաֆով ղրկել իրանց ամենագեղեցիկ ճառը, հոչակաւոր երգիչների եւ երաժիշտների նուագածութիւնները ֆոնոգրաֆի միջոցով կարելի է լսելի անել երկրագնտիս ամեն ծայրերում։ Անգլիացիների լրագիրների կարծիքով ֆոնոգրաֆը մի նոր դարագլուխ է բացում քաղաքակրթութեան պատմութեան մէջ։

—

Ճանճերու օգուտը։—Ճանճերու օգուտը զլխաւորաբար յայնում է, որ սատկած մանր մանր ճճիները կը սպառեն, որոնց ապականեալ հիւլէներն օդը կրնային ապականել։ Երբ Լինն է կ'ըսէր թէ երեք ճանճ աւելի շուտ կրնայ սատկած ձի մը ուտել սպառել, քան թէ առիւծ մը, յայտնի է որ երեք ճանճին սերունդն ալ ի միասին կ'ուտուր։ Եւ իրօք ճանճ մը կրնայ 20,000 ճանճ յառաջ բերել, որոնցմէ իւրաքանչիւրը դարձեալ քանի մ'օրուան մէջ 20,000ական ճանճ յառաջ կը բերէ, եւ այսպէս կրնայ երեք ճանճ ձի մը սպառել։ Մարտ 20 է ին լոյս տեսնող ճանճ մը մինչեւ Ապրիլ 24-ին կ'ունենայ 300 սերունդ, մինչեւ Մայիս 28 կ'ունենայ 90.000, մինչեւ Յուլիս 2 կ'ունենայ 27.000,000, եւ Օգոստոս 8-ին 3.000,000,000 սերունդ։ «Հ. Ա.»։

—

Յարալեզ։—Մի ամերիկացի բժիշկ ի նկատի ունենալով որ դիւղացիները իրանց վէրքերը բուժելու համար դիմում են շների օգնութեան որ նորանք լիզեն այդ վէրքերը, սկսեց պարապել այդ բանի հետազօտութեամբ։ Կարճ ժամանակից յետոյ բժշկի փորձերը ցոյց տուին այդ ձեւի ապաքինութեան ուղիղ լինելը։ Ուստի հիացեալ բժիշկը այդ եղանակի համաձայն բացել է այժմ մի Յարալիզական բժշկանոց։

—

ՄԻ ԽՆԴԻՐ

Հորս աշակերտ նստած էին սեղանի շուրջ դէմ առ դէմ։ Դոցանից Արամը և Գարեգինը վիճում էին մի հասարակ հանման գործողութեան վերայ։ Արամն ասում էր անկարելի է հանել, իսկ Գարեգինը պնդում էր որ մնացորդը մեր դասատան մէջ գտնուող աշակերտներից էլ շատ է։ Բազրատը պաշտպանում էր Արամին, իսկ Դաւիթը Գարեգնին։ Վերջը երբ բացատրուեցաւ խնդիրը, տեսան որ ամենքն էլ ճշմարիտ էին։ Արդեօք ինչ էր գրած և կամ ինչ հնարներով կարելի էր միևնոյնը առանց վիճելու վերջացնել։

Ադ. Սարգարեան.

ՀԱՆԵԼՈՒԿ

Առաջ. Ս. Ք.

Գտէք մի ածական անուն, որ կցուած ունենայ իւր մէջ Հայոց մայրաքաղաքի յորջորջման ուղղական և սեռական հոլովները միատեղ։

ՐԵԲՈՒՍ

Առաջ. Յ. Ղազարեանց.
Նկար. տիկին Մարգարիտ Ալեքսանեան։



Այս ռեբուսի առաջին լուծողը կը ստանայ տիկին Մարգարիտ Ալեքսանեանի զբաղեցուցած ձեռագիր մի հայկեղ ալբոմ։

Խմբագիր-Հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ